

30-31(387-388)

31.10.2014

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

## ԼԱՎԱԳՈՒՅՆ ՆՎԵՐ ՆՈՐ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆՈՒՄ



Հոկտեմբերի 13-ին տեղի ունեցավ Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցի նոր մասնաշենքի բացման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, վարչապետ Արա Հարությունյանը, կրթության և գիտության նախարար Ս. Ասրյանը, կառավարության անդամներ, հյուրեր, ծրագրի հովանավոր, ռուսաստանաբնակ բարերար Նիկոլայ Սարկիսովը:

Դպրոցի տնօրեն Ռոմելա Դադայանն իր ելույթում շնորհակալություն է հայտնել բարերարին՝ ասելով, որ նրա հովանավորությամբ կառուցված նոր մասնաշենքը դպրոցի 90-ամյակի նախաշենքին լավագույն նվերն է աշակերտական և մանկավարժական կոլեկտիվներին:

ԼՂՀ կրթության և գիտության նախարար Ս. Ասրյանը նշել է, որ ևս մեկ հոյակապ դպրոցաշենքի կառուցումը, ի շարք այլ նորակառույց դպրոցների, վկայում է դպրոցաշինության նկատմամբ ԼՂՀ իշխանությունների որոշեցրած քաղաքականության հետևողական իրագործման:

## ԵՎՍ ՄԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋ

21 տարի առաջ այս օրերին հայ ազատամարտիկները թշնամուն դուրս վճռեցին պատմական Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Կովսական գավառից: Կովսական և հարևան Միջնական (վերաբնակեցվել է ավելի շուտ՝ 1995 թվականին) քաղաքների վերաբնակեցումով սկսվեց մայր Արաքսի ձախափնյա Հակարի և Ողջի գետերի ավազանների վերստին հայացումը: Մոտ 2 տասնամյակի ընթացքում բավականին շենացել է պատերազմից ամբողջովին ավերված քաղաքն ու դարձել կենտրոն մոտակա բնակավայրերի համար: Այժմ համայնքում բնակվում է 800-ից ավելի մարդ, այդ թվում՝ սիրիահայեր (մոտ 30 ընտանիք): Թաթուլ Կրպեյանի անվան միջնակարգ դպրոցում սովորում են 100-ից ավելի աշակերտներ, իսկ նախադպրոցական խմբում կա 17 երեխա: Համայնքում ընդհանրապես կա 70-ից ավելի նախադպրոցական երեխա, որն էլ մանկապարտեզ ունենալու խնդիր է առաջ բերել: Վերջին տարիներին քաղաքում իրականացվեցին մի շարք շինարարական աշխատանքներ պետական բյուջեով և բարերարների կողմից: Շահագործման են հանձնվել 2 բազմաբնակարանոց տներ սիրիահայերի համար, տներ՝ բազմազավակ ընտանիքների համար, հիմնանորոգվել է դպրոցի շենքը և այլն:

Հոկտեմբերի 27-ին նշվեց քաղաքի օրը, որի ընթացքում կայացավ հարևանությամբ գտնվող նորակառույց մանկապարտեզի և հիվանդանոցի շենքերի բացումը: Տոնական միջոցառմանը ներկա էին ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանը, վարչապետ Արա Հարությունյանը, նախարարներ, Քաշաթաղի շրջվարչակազմի ղեկավարությունը, այլ պաշտոնյաներ, հյուրեր հարևան Սյունիքի մարզից, այլ տեղերից:

Հայտարարվում է հանդիսավոր մասի սկիզբը, հնչում է Արցախի օրհներգը: Կովսականի քաղաքապետ Ռազմիկ Մարգարյանն իր ելույթում երախտագիտություն հայտնեց երկրի իշխանություններին՝ քաղաքի



տոնական օրը նման նվեր պարգևելու համար, որն էլ երաշխիք է՝ կովսականցի կոտեմնի իր երազած քաղաքը: «Մանկապարտեզի շահագործումը կարևոր է նաև նրանով, որ բացի 60 երեխաների դաստիարակությունից՝ քաղաքում կբացվի 20 աշխատատեղ: Իսկ նորակառույց և ժամանակակից սարքավորումներով ու գույքով հագեցած հիվանդանոցի պայմանները կբարձրացնեն բուժսպասարկումը»,- ասաց Ռ. Մարգարյանը:

Ներկաներին իրենց ելույթով ողջունեցին Կովսականի Թաթուլ Կրպեյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտներն ու «Թաթուլ» ազգագրական երգ ու պարի խմբակի սաները, սիրիահայ մանուկները: Մանկապարտեզի մուտքի կարմիր ժապավենը կտրելու պատիվը տրվեց ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանին և Կովսականի քաղաքապետին: ԼՂՀ Նախագահը ծանոթացավ մանկապարտեզի պայմաններին, որն ապահովված է գեղեցիկ գույքով, ունի կահավորված խոհանոց, սանհանգույց, խաղահրապարակ, կաթսայատուն և այլ օժանդակ մասեր:

Զոհրաբ ՈՂՔՈՅԱՆ

## ԽՈՍԵ ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Դպրոցը մի վիթխարի ուժ է, որը որոշում է ժողովուրդների ու պետությունների կենցաղն ու ճակատագիրը:

Դ.Մենդելեև

Ուրախալի է, որ այսօր մեր երկու հայկական հանրապետությունների իշխանություններն իրենց որոշեցրած ռազմավարությամբ ամեն ինչ անում են՝ դպրոցաշինության սկսած պատվաբեր գործը հաջողությամբ ավարտին հասցնելու համար:

2014թ. սեպտեմբերին մեծ բարերար Արա Աբրահամյանը (Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության նախագահ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպան) իրականություն դարձրեց Ստեփանակերտի հ.6 հիմնական դպրոցի ուսուցչական և աշակերտական կոլեկտիվների վաղեմի ու նվիրական երազանքը՝ պարգևելով նրանց եվրոպական շենքերի համապատասխան հոյակերտ դպրոցական շենք՝ հագեցած նյութատեխնիկական համապատասխան միջոցներով:

Ուղիղ մեկուկես ամիս անց դպրոցի կոլեկտիվը մեծ խանդավառությամբ ու ոգևորությամբ կազմակերպեց նորակառույց դպրոցական շենքի հանդիսավոր բացման արարողությունը, որին ներկա էին ԼՂՀ Նախագահ

Բակո Սահակյանը, մեծ բարերար Արա Աբրահամյանը (որն, ի դեպ, դպրոցին նվեր էր բերել 20 նոր սերնդի համակարգիչ), պետական այրեր, հյուրեր, ուսուցիչներ և աշակերտներ: Շատ կարճ ժամանակում ճաշակով կահավորված դասասենյակները, տարատեսակ ծաղիկներով զարդար-



ված աչք շոյող միջանցքները, տոնական տեսք ստացած դպրոցական շենքը էլ ավելի բարձր տրամադրությամբ էին համակել ներկաներին: Շուրջըլորը խանդավառ հույզեր էին, զվարթ երգ, ծափ, ծիծաղ ու մանուկ-

ների աշխույժ կանչ: Դպրոցի բակում թևին էին տալիս երազն ու լույսը, իսկ եռազույնը խորհրդանշող մեծ փուչիկներն ու ճերմակաթև աղավաղները հուզումներով սպասում էին իրենց հաղթական ու վերջնական հանգրվանին:

Դպրոցի գլխավոր մուտքի մոտ

մասիական երգով: Վազգեն Օվյանի «Այս Դարաբաղն է» բանաստեղծության գեղեցիկ ասմունքով էրիկ Աղանյանը էլ ավելի բարձրացրեց հանդիսության մասնակիցների հայրենասիրական ոգին:

Շնորհավորանքներից ու ջերմ խոսքերից անմիջապես հետո Պարզև Արքեպիսկոպոսի օրհնության հանդիսավոր արարողություն կատարեց: Ապա հյուրերը դպրոցի տնօրեն Վ. Դահրամանյանի ուղեկցությամբ էքսկուրսիա կատարեցին նորակառույց շենքի ներսում, ուր նրանց սպասում էին տարաբնույթ հետաքրքիր անակնկալներ, որոնք ուղեկցվում էին հոգեպարար երաժշտությամբ, ուրախ երգ ու պարով:

Երախտագիտության խոսք՝ ուղղված մեծ բարերար Արա Աբրահամյանին.

- Մեր շատ սիրելի բարերար պարոն Արա Աբրահամյան, անսահման ուրախությամբ ու ջերմ սիրով խորին երախտագիտություն ենք հայտնում Ձեզ՝ մեր երազանքների դպրոցական շենքը մեզ պարգևելու համար: Մեր հոյակերտ կրթօջախը, անշուշտ, երաշխիքն է Արցախի աշխարհի հուսալի ապագայի և հարատևման:

Հավատացնում ենք, որ աչքի լույսի պես կապիենք այս բարեկարգ, լուսավոր ու հարմարավետ կրթօջախը,

մասունքի պես կփայլայենք ու սրբությամբ կհանձնենք զալիք սերունդներին: Վստահ ենք, որ նորակառույցն ուսումնական և ստեղծագործական նոր լիցքեր կհաղորդի բոլորիս, կհանդիսանա հոգևոր լավագույնի այն աղբյուրը, որ իմացության լույս է կոչվում: Թող Աստված պահպան լինի մեր անդաստանին՝ իր մշակներով և ուշին, խելոք, ժիր մանուկներով:

Մենք քաջ գիտենք, որ ազատ ու անկախ Արցախին հնուտ մասնագետներ են պետք, կյանքի բոլոր բնագավառներին նոր համալրում է պետք: Հայոց աշխարհին նվիրյալներ են պետք: Մենք կլինենք այդ նվիրյալները և մեր հոգու գանձերը, մեր մտքի ջերմությունը, սրտի կրակն անմնացորդ կտանք մեր սաներին՝ ի փառս Արցախի աշխարհի էլ ավելի բարգավաճման ու ծաղկման:

Շնորհակալություն նաև ԼՂՀ իշխանություններին, բոլոր շինարարական կազմակերպություններին ու շահագրգիռ անձանց, ովքեր այս մեծագույն նվերն են մատուցել մեզ:

**Ռիմա ՄԵՆԸՈՒՄՅԱՆ**  
Ստեփանակերտի հ. 6 հիմն. դպրոցի հայոց լեզվի եւ գրականության մեթոդախմբի ղեկավար

ՕՐԱԳԻՐ

ՆՈՒՌԸ ՄՏԵԼ Է ՆՈՐ ՓՈՒԼ

Նոր ուսումնական ռազմավարություն ծրագրող առաջին փուլում ներդրվեց Ստեփանակերտի և Շուշիի դպրոցներում չորս տարի առաջ: Այս ուսումնական ծրագրում քանակական և որակական փոփոխություններ են կատարվել. ծրագրի աշխարհագրությունը ընդլայնելու նպատակով առաջին անգամ չորս տարի համակարգիչներ բաժանվեցին շրջակենտրոնների դպրոցների տարրական դասարաններին, այնուհետև նաև բոլոր դպրոցներում և կօզտագործվեց ուսումնական գործընթացում որպես լրացուցիչ գործիք:



Ստեփանակերտի և Շուշիի դպրոցներում ՆՈՒՐ-ը կսկսի գործել նաև միջին օղակում և որպես առաջին քայլ նոր տեսակի համակարգիչներ են բաժանվել 6-րդ դասարաններին: Դրանք ոչ թե չորս-հինգ, այլ աշխարհահռչակ «Intel» կազմակերպության կողմից մշակված և պատրաստված նոր սերնդի «Class Mates» տեսակի նեթբուքներ, որոնք ունեն ավելի մեծ հնարավորություններ, տեխնիկապես ավելի հզոր են չորս-հինգ և ավելի արդյունավետ կլինեն ուսումնական գործընթացում օգտագործելու համար: Class Mates տիպի համակարգիչները նախատեսված են պատասխանելու ուսուցչի հարցերին, հնչյուն և տալիս կրթության առավելագույն չափ՝ ապահովելով տեքստերի մշակիչներով, աղյուսակների կազմման, աշխատանքների գեղարվեստական ներկայացման, տեսանյութերի ու խաղերի ստեղծման, հնչյուն և տալիս համացանցում մեծ արագությամբ նավարկելու հնարավորություններ:



Նոր համակարգիչն ունի նաև ստեղծագործական ջիլը խթանող ու դրա զարգացմանը նպաստող հնարավորություններ, նկարելու և գունավորելու միջոցներ, համացանցային տեսախցիկ՝ ծայնագրիչով, որոնք թույլ են տալիս երեխաներին արտահայտվել և շփվել տեսողական դաշտում, լուսանկարել



ու տեսագրել, հետագայում այդ նյութերը խմբագրել: Բացի այդ, տալիս է նաև ընթերցանության միջոցներ, որոնք կօգնեն աշակերտներին սովորելու ու բարելավելու իրենց կարողությունները:

Ուրախությամբ հայտնում են, որ ՆՈՒՐ ծրագրի պատասխանատուները Ստեփանակերտի դպրոցների համար ձեռք են բերել նաև պրոյեկտորներ, որոնք ևս մի խթան կհանդիսանան ուսումնական գործընթացում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման համար:

ԼՂՀ կրթության և գիտության նախարարության օժանդակությամբ հոկտեմբերի 20-24-ը Արցախի պետական համալսարանում կազմակերպվեցին վերապատրաստման դասընթացներ ծրագրի շրջանային պատասխանատուների և Ստեփանակերտի ու Շուշիի դպրոցների 6-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների համար: Ընդհանուր առմամբ վերապատրաստվեցին շուրջ 200 ուսուցիչներ:

Վերապատրաստման դասընթացներն անցկացրին արգենտինահայ մեր հայրենակիցներ Լուսինե Իսմիկյանը, Անուշ Սկրտչյանը, տեխնիկական մասն ապահովեցին թիմում ընդգրկված տղաները:

Որպես ՆՈՒՐ ծրագրի ուսումնական գծով արցախյան պատասխանատու, այս չորս տարվա աշխատանքը գնահատում են բավարար: Իհարկե հանդիպել ենք տարբեր տեսակի դժվարությունների, որոնցից առաջինը կնշեի ուսուցիչների մոտ համակարգային գրագիտության պակասը: Բայց ծրագրի հիմնական նպատակն էլ հենց ժամանակակից տեխնիկական միջոցներից օգտվելու ուսուցիչների զարգացումն է ինչպես դպրոցականների, այնպես էլ ուսուցիչների և ծնողների շրջանում:

Մեզ հաջողվեց ծրագրի առաջին փուլը հաջողությամբ իրականացնել՝ շնորհիվ թիմային աշխատանքի, որի համար էլ ուզում են շնորհակալություն հայտնել Արգենտինայի պատասխանատու կազմակերպիչների թիմին, դպրոցներում ծրագրի իրականացնող ուսուցիչներին և ԼՂՀ կրթության և գիտության նախարարությանը՝ բոլոր հարցերում մեզ օժանդակելու համար:

Ընդհանուր առմամբ բաժանվել են 800 նեթբուքներ, իսկ 4 տարվա ընթացքում՝ 7200 համակարգիչ:

**Մարգարիտա ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
**ՆՈՒՐ-ի արցախյան համակարգող**

**ԷԿՈՂՈՍԻՆԱՍԻՆԴՐՆԵՐԻՆ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԼՈՒՑՈՒՄ ՏԱԼ  
ՆԱԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ**

Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի մի խումբ աշակերտներ իրենց ուսուցիչների հետ, ուսումնական նախագծեր իրականացնելու նպատակով, չորսօրյա այցով հեթոթական անգամ Արցախում էին: Ի դեպ, այս կրթահամալիրն իրականացնում է նաև կրթական այլընտրանքային, հեղինակային ծրագրեր, ակունքային աշխատանքներ, որոնցից է կրտուրը:

Մայրաքաղաքի հ. 3 միջնակարգ դպրոցի դահլիճում տեղի ունեցած հավաքույթին ներկա էին ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար Միքայել Համբարձումյանը, Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի վարիչ Կարեն Մարգարյանը, քաղաքի դպրոցների ներկայացուցիչներ: Էկոտուր նախագծի ղեկավար Մարթա Ասատրյանն ասաց, որ խումբը, որում ընդգրկված են նաև վրացախոսների ակունքի անդամները, բազմաթիվ նախագծեր է իրականացրել Հայաստանում և Վրաստանում: Արցախ գալու հիմնական նպատակն էր տեղի դպրոցականներին ծանոթացնել էկոտուր միջազգային ստուգատեսին, ցույց տալ այն նախագծերը, որոնք նախորդ տարի ծանաչվել են լավագույնը: Էկոլոգիական նախագծերն առօրյայում մեծ տարածում ունեն, և սովորողների միջոցով այդ խնդիրներին լուծում տալը ճիշտ միջոց է:

Նշենք, որ անցած ուսումնական տարում Ստեփանակերտի դպրոցների աշակերտներին կազմված թիմը փորձնական կարգով մասնակցել է ստուգատեսին և լավ արդյունք ցույց տվել ու շահել ՀՀ Տավուշի շրջանում գտնվող «Չիկատար» բնապահպանական կենտրոնի համանուն միջազգային ճամբարի ուղեգիր:

Էկոտուրի աջակիցներն են ՀՀ կրթության և գիտության և բնապահպանության նախարարությունները: Նպատակն է հասարակության ուշադրությունը ուղղել բնապահպանական խնդիրներին և որոշակի լուծում տալ դրանց ուսումնական նախագծերով:

Հանդիպման ժամանակ տեսանյութով ներկայացվեց Արցախի թիմի աշխատանքը: Էկոլոգիական կարևորագույն խնդիրներից է շրջակա միջավայրի աղտոտումը: Աշխարհում տարեկան մոտ 2 մլն մարդ մահանում է քաղաքային տարաբնույթ աղտոտումներից: Արցախը նույնպես ունի այդ հիմնախնդիրը: Երեխաները ներկայացրել էին Կարկառ գետի էկոլոգիական խնդիրները՝ կատարելով հետազոտություններ, անցկացնելով հարցազրույցներ:

Հանդիպման ժամանակ ցուցադրվեցին նաև այլ աշխատանքներ, որոնցից էր թափոնների վերամշակման մասին տեսանյութը: Էկոտուրի նախագծերի առաջարկն արդեն արված է: Յուրաքանչյուր թիմում պետք է ընդգրկվեն 4 կամ 5 աշակերտ և մեկ ղեկավար: Հայտերը պետք է ներկայացվեն ապրիլի 1-12-ը, քննարկումները կարող են լինել նաև առցանց, որից հետո համեմատողով կողմից թիմերը ստանում են հրավեր՝ երևանյան էկոտուրի հավաքին մասնակցելու համար, որը լինելու է ապրիլի 23-ին: Մրցանակը կարող է լինել ճամբարի ուղեգիր, դրամական պարգև:

ԼՂՀ ԿԳ փոխնախարար Մ. Համբարձումյանը և կրթության բաժնի վարիչ Կ. Մարգարյանը, ողջունելով նախագիծը, արցախյան դպրոցականներին կոչ արեցին մասնակցել ակտիվորեն:

Էկոտուրն ունի նաև հայրենագիտական և

ճանաչողական նշանակություն: Ակունքի անդամները շրջել են ամբողջ Հայաստանով մեկ, նույն անուն են նաև Արցախում, փորձում են ճանաչել հայրենիքը, վեր հանել նրա արժեքները: Նրանք հյուրընկալվել են արցախյան իրենց հասակակիցների տներում, մտիկից ճանաչում են նրանց կենցաղը:

Այցի օրերին նրանք միացել է կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանը: Հ. 7 հիմնական դպրոցում կայացել է հանդիպում մայրաքաղաքի դպրոցների ներկայացուցիչների հետ: Ա. Բլեյանը մանկավարժական գրույցի ձևով փոխանցել է իր կրթահամալիրի փորձը, պատասխանել մանկավարժների հարցերին:

Այնուհետև հանդիպումը շարունակվել է ավելի ջերմ և ուրախ մթնոլորտում, որտեղ ներկա են եղել ԼՂՀ կրթության և գիտության նախարար Ս. Արայանը, փոխնախարար Մ. Համբարձումյանը, կրթության քաղաքային բաժնի վարիչ Կ. Մարգարյանը, հյուր եկած սեբաստացիները, նրանց հյուրընկալած ընտանիքների դպրոցականները, մայրաքաղաքի դպրոցների տնօրեններ, փոխտնօրեններ և այլք: Բոլոր ելույթ ունեցողները կարևորել են նման հանդիպումները, որոնք միմյանց ավելի լավ ծանաչելու, համագործակցելու, հետևաբար, իրենց կյանքն ավելի հետաքրքիր դարձնելու հնարավորություններ են ստեղծում:

Տեղեկացնելով, որ այս տարի լրանում է «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի 25-ամյակը և նույնիսկ 10-15-ը տոնական օրեր են լինելու այնտեղ, Ա. Բլեյանը Արցախի դպրոցների կուլեկտիվներին հրավիրեց ներկա գտնվել:

**ՏՏ ՈՒՐՈՒՄԻ ԶԱՐԳԱՅՄԱՆԸ  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՇԱՐՆԵՐԻ  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՇԱՐՆԵՐԻ**

Բազմիցս ասվել է, որ մեր երկիրը չունի այնպիսի բնական պաշարներ (նավթ, գազ), որոնք մեծ գումարներ են բերում: Բայց փոխարենը հայ ազգը օժտված է ինտելեկտուալ մեծ ներուժով, մի բանով, որով առաջ է գնում քաղաքակիրթ աշխարհը: Խնդիրն այն է, որ այդ ներուժը ճիշտ օգտագործվի, պայմաններ ստեղծվեն նրա բացահայտման և ուղղորդման համար: Այսօր ամբողջ աշխարհը զարգանում է տեղեկատվական տեխնոլոգիաների ուղղությամբ, որի հիմքում բարձր ինտելեկտն է, առավելապես՝ բնագիտամաթեմատիկական ուղղությամբ զարգացածությունը:

«168 ժամ» թերթին տված հարցազրույցում ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Գևորգյանը, ով վերջերս մասնակցել է Հարավային Կորեայում տեղի ունեցած Մաթեմատիկայի միջազգային կոնգրեսին, ասել է. «Զգարմանը, սակայն մաթեմատիկական կրթության արդյունք են և պետական բյուջե մուծում են գրեթե նույնքան հարկ, որքան որ ինքնաբերական կրթության ոլորտը: Այսօր ՏՏ ոլորտն ունի բարձր վարձատրվող կադրերի խիստ պակաս: Եթե ներդրումներ արվեն մաթեմատիկայի, ֆիզիկայի և առհասարակ բնագիտության ոլորտներում, ապա առավելագույնը 5 տարում հնարավոր կլինի ուժեղացնել ՏՏ և բարձր ճարտարագիտության ոլորտը, ինչը էապես կմեծացնի բյուջեի մուտքերը»:

Ի՞նչ ծրագրեր ունի ԼՂՀ կառավարությունն այդ ուղղությամբ: Պատասխանելով այս հարցին վերջերս Արցախի պետական համալսարանում տեղի ունեցած հանդիպման ժամանակ, ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանն ասել է, որ բարձր տեխնոլոգիաները զարգացնելու համար նախ պետք է ունենալ նորմալ կրթություն: Այս առումով դպրոցներում փորձում են սկսել ամենացածր տարիքից: Ինչպես հայտնի է, գործում է ՆՈՒՐ ծրագիրը, որն առայժմ Ստեփանակերտում, Շուշիում համակարգիչներ է տրամադրում 1-4-րդ դասարաններում սովորողներին: Նպատակն է, որ երեխաները մանկուց սովորեն և հմտանան: Երկրորդ՝ զարգացնում են ինտերնետը և խնդիր է դրված «Ղարաբաղ Տեղեկումի»-ի առաջ, որ կարճ ժամանակահատվածում Արցախում, սկզբից խոշոր, հետո բոլոր բնակավայրերում ապահովվել նորմալ ինտերնետային կապ: Երրորդ՝ շուտով մենք կունենանք «Թունո» կենտրոն՝ երեխաների զարգացման համար: Նշենք, որ «Թունո»-ն այսօր գործում է Երևանում: Այդ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը յուրատեսակ հաստատություն է 12-18 տարեկան բոլոր երեխաների համար, ովքեր մեծ հետաքրքրություն ունեն ՏՏ հանդեպ, ունեն տեխնիկական հակումներ: Կենտրոնի նպատակն է երեխաներին տրամադրել յուրատեսակ ուսումնական փորձառություն: Կենտրոնը երեխաներին օգնում է ընդլայնելու իրենց մտափորձը: Ստացած գիտելիքները նրանց համար երաշխավորում են խոստումնակից ու հաջող ապագա:

ԼՂՀ վարչապետն ասաց, որ ինքը տեսել է, թե ինչպես է ազդում երեխաների զարգացության վրա այդ կենտրոնը, որը երեխաներին կապելով համակարգիչին՝ ոչ թե հիվանդացնում է նրանց, ինչպես շատերն են կարծում, այլ քարոզում է ամողջ ապրելակերպ, դաստիարակվածություն:

Ստեփանակերտում սկսված են նման կենտրոնի ստեղծման աշխատանքները: Սկզբում այն կգործի մայրաքաղաքում, այնուհետև՝ շրջկենտրոններում: Դասընթացները կվարեն բարձրակարգ մասնագետները:

Բացի այդ, Ստեփանակերտի նախկին կահույքի ֆարիկայի շենքը վերանորոգվում և դարձյալ տրամադրվելու է ՏՏ ուղղության ընկերություններին, որտեղ դարձյալ վարելու են դասընթացներ: «Այսինքն՝ մենք կարևորում ենք այդ ուղղությունը, և եթե լինում են դրսևում սովորել ցանկացողներ, այս ուղղությունը մրցույթից դուրս է»,- ասաց Ա. Հարությունյանը՝ հավելելով, որ բարձր տեխնոլոգիաներին, մեր երկրի ապագա զարգացման առումով, կարևոր տեղ են տրվում և ՏՏ զարգացման համար ստեղծված է հիմնադրամ, որի հոգաբարձուների խորհրդի նախագահը ինքը վարչապետն է:

ԱՐՊԴ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴԵՊԻ ԵՐԿՐԻ ՃԱՆԱԶՄԱՆԸ ՏԱՆՈՂ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐԿ

Հոկտեմբերի 13-ին Արցախի պետական համալսարանի հյուրընդունախմբի անդամները...

պայում շատ քչերը գիտեն դրա մասին: Նա լիաժողով է, որ Համաձայնագրի ստորագրման...



ԱրՊԴ ղեկավար Մանուշ Մինասյանը իր ողջունյի խոսքում հանդիպումը կարևոր իրադարձություն համարեց...

հիմնական պատճառը, որ մեր համալսարանը որոշում կայացրեց Համաձայնագրի ստորագրելու...

խոսքը փոխանցվում է Լյովենի համալսարանի պրոֆեսոր Բերնար Կուլիին, ով ավարտած լինելով...

Եվրախորհրդարանի անդամ, ԵՄ-Հայաստան բարեկամության խմբի ղեկավար էլենի Թեոֆանուսը...

Պրոֆեսոր Կուլիին ասաց, որ իր համար մեծ հաճույք է պատիվ է լինել Արցախի պետական համալսարանում...

որն է՝ գտնվում են Արցախում և իրականացրել են մի շարք հանդիպումներ: Բնականաբար, եղել են պաշտոնական հանդիպումներ...

ԱրՊԴ գիտական խորհուրդը իր վերաբերմունքն է արտահայտել այս իրադարձության հետևանքների նկատմամբ...

Ներկաները հնարավորություն ունեցան նաև հարցեր ուղղելու հյուրերին:

ԱրՊԴ գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը հարց ուղղեց պրոֆեսոր Բերնար Կուլիին (Ի դեպ, ֆրանսերենով, այնուհետև՝ հայերեն)...

Որպես հավելում՝ Յանիս Խարալամպիդիսն ասաց, որ Արցախի պետական համալսարանի պատվավոր պրոֆեսոր դառնալը ոչ միայն պատիվ է, այլև՝ պարտավորություն...

ՖԱԿՈՒՏԵՏԸ ԵՆԵՑ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 25-ԱՄՅԱԿԸ

Այս տարի Արցախի մայր բուհը կնշի իր ստեղծման 45-ամյակը: Բայց բուհի ենթակառուցվածքում մեկ այլ հոբելյան էլ կա՝ տնտեսաիրավաբանական ֆակուլտետի հիմնադրման 25-ամյակը...

Ինչպես տեղեկանում ենք ԼՂՀ կառավարության մանր ծառայությունից, հյուրերը նախ ծաղիկներ են դրել Արցախյան պատերազմում զոհված ԱրՊԴ ուսանող-ազատամարտիկների հիշատակին կանգնեցված հուշարձանին...

Իր ողջունյի խոսքում ԱրՊԴ ղեկավար Մանուշ Մինասյանը մասնավորապես նշել է, որ երկու բուհերի միջև արդեն ձևավորվել է արդյունավետ համագործակցություն: Ընդամենը մեկ ամիս առաջ նման հանդիպում տեղի է ունեցել Երևանում: ԳՊՏ համալսարանում, որին ներկա էր նաև ԱրՊԴ խորհրդի նախագահ, հանրապետության վարչապետ Արա Հարությունյանը: Մ. Մինասյանը շնորհակալություն է հայտնել փոխարքային այցելության համար՝ ակնկալելով, որ առաջիկայում այդ համագործակցությունն ավելի կամրակալվի:

ԼՂՀ վարչապետ Ա. Հարությունյանը նշել է, որ անցած 25 տարիների ընթացքում ԱրՊԴ շրջանավարտները կարևոր դերակատարություն են ունեցել և հիմա էլ ունեն Արցախի պետականության կայացման գործում: Անդրադառնալով բուհում տնտեսագիտության մասնագիտության հիմնադրման և կայացման ուղիին՝ Ա. Հարությունյանը շեշտադրել է հատկապես տնտեսագիտական գիտությունների դրսևոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ԳՊՏ համալսարանի կառավարման ամբիոնի վարիչ Յուրի Սուվարյանի դերը: Ծնորհակալություն հայտնելով նրան Արցախի գիտակրթական համակարգի զարգացման գործում ունեցած մեծ ավանդի համար՝ Ա. Հարությունյանը նրան պարգևատրել է Արցախի վարչապետի, իսկ ԱրՊԴ ղեկավար Մանուշ Մինասյանը՝ համալսարանի «Ոսկե խաչ» հուշանշանով: Ֆակուլտետի կայացման ուղղությամբ ունեցած ներդրման համար ԳՊՏՀ կառավարման ֆակուլտետի ղեկավար, դոցենտ Սիլվանա Թավադյանն արժանացել է վարչապետի պատվոգրի:

Ծնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության և պարգևատրության համար՝ Յու. Սուվարյանն իր ելույթում անդրադարձել է Արցախի տնտեսության զարգացմանն ու գերազանց ուղղություններում իրականացվող քաղաքականությանը: Տնտեսության զարգացման արդյունավետության բարձրացման համար Յու. Սուվարյանը մի շարք նկատառումներ է ներկայացրել, որոնք պետք է հիշատակել, մասնավորապես, գյուղատնտեսությանը, զբոսաշրջությանը և վերանաշակող արդյունաբերությանը:

Հանդիպմանը ողջունյի խոսքով հանդես են եկել նաև ԼՂՀ կրթության և գիտության նախարար Ալվա Ասրյանը, ԳՊՏՀ ղեկավար Կորյուն Աթոյանը:

ԱՐՊԴ-Ե ՈՒՆԵՅԱԿ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԿԵՆՏՐՈՆ

Ինչպես տեղեկանում ենք ԱրՊԴ կայքէջից, հոկտեմբերի 21-ը ԱրՊԴ-ում նշանավորվեց երկու իրադարձություններով՝ գերմաներեն լեզվի կենտրոնի բացմամբ և վաղամեռիկ դասախոս Մարիանա Առուստամյանի «Հայոց ցեղասպանության թեման գերմանական և ավստրիական գրականություններում» զբոսն անցնելու տարբերակի շնորհանդեսով:

Գերմաներենի կենտրոնն ունենալը տարիներ շարունակ երազանք էր: Այսօր այն իրականություն է գերմանացի բարեկամների, ԼՂՀ արտաքին գործերի նախարարության և համալսարանի շնորհիվ:

Կենտրոնի բացման կապակցությամբ Արցախ էին ժամանել Գերմանիայի Հեսսեն երկրամասում ՀՀ պատվավոր հյուպատոս Սթիֆեն Բրայան Ֆերան և նույն հանրապետության Բերգշտրասեն շրջանի ղեկավար Մաթիաս Վիլկեսը:

Ռեկտոր Մանուշ Մինասյանն իր խոսքում նշեց, որ կենտրոնը ոչ միայն հաճելի և սպասված նվեր է, այլ նաև հնարավորություն յուրաքանչյուր արցախցու համար:

Հյուրերը տպավորված էին ուսանողների գերմաներեն լեզվի իմացությամբ, ինչպես նաև Մ.Առուստամյանի ավիստությամբ:

«Կենտրոնն էլ ավելի հզոր ազդակ կհանդիսանա լեզվի ուսումնասիրության խորացման, ինչու չէ, Արցախի ծայրը Եվրոպայում հասանելի դարձնելու համար՝ հաշիվ առնելով նաև այն, որ Գերմանիան Եվրախորհրդարանում բավականին ծանրակշիռ տեղ ունի», - նշեց Սթիֆեն Բրայան Ֆերան:



ՆՐԱ ԳԱՂԱՓԱՐՆԵՐՈՎ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՆ ՄՆԿԵԼ ՍԵՐՈՒՆՆԵՐԸ

# ՆՐԱ ԳԱՂԱՓԱՐՆԵՐՈՎ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՆ ՄՆԿԵԼ ՍԵՐՈՒՆՆԵՐԸ

Արցախյան պատերազմի լեգենդար հրամանատար, «Մարտական խաչ» 1-ին աստիճանի, «Ոսկե արծիվ» շքանշանների ասպետ, Արցախի հերոս Աշոտ Ղուլյան-Բեկորը հոկտեմբերի 6-ին կղաճար 55 տարեկան: Հոկտեմբերի 15-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում տեղի ունեցավ համդիսավոր միջոցառում՝ նվիրված հերոսի հորեղանակին: Ներկա էին ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Աժ պատգամավորներ, կառավարության անդամներ, ՊԲ բարձրաստիճան սպայակազմի ներկայացուցիչներ, զինծառայողներ, հերոսի մարտական ընկերները, հարազատներն ու բարեկամները:

Բեմում Ստեփանակերտի հերոսի անունը կրող հ. 2 հիմնական դպրոցի աշակերտները՝ յուրաքանչյուրը «ԲԵԿՈՐ» անվան մի-մի տառ կրծքին, ասել է թե՛ իրենց կրծքում կրելով հերոսի անունը, նրա գործը շարունակելու, նրա պատգամներին հավատարիմ լինելու երդում տվին:

«Գոյամարտ» հեռուստաօրագրի պատրաստած «Բեկոր», կամ հայրենասիրության բանաձևը» տեսաֆիլմը, Բեկորի մարտական ընկերների հուշերը վերակենդանացրին հերոսի՝ երբեք չխամրող նկարագիրը:

Արցախյան շարժման առաջամարտիկ Արկադի Կարապետյանը, ով Աշոտ Ղուլյանին ճանաչում է 1975 թվականից, երբ նրա ընտանիքը Բաքվից վերադարձավ հայրենի խնամարան գյուղ, այնպիսի դրվագներ պատմեց, որոնց համարությունը դեռ տեղյակ չէ: Աշոտ Ղուլյանը Ղարաբաղի ազգային ազատագրական պայքարի ընդհատակյա խմբին անդամագրվել է անցյալ դարի 70-ական թվականներից: Հենց սկզբից էլ նրա դերը զենք-զինամթերք հայթայթելն էր: Ա. Կարապետյանը պատմեց, թե նա ինչպես էր դա կատարում, ինքնաշեն զենքեր սարքում, ինքն էլ փորձարկում:



Հրամանատար, ով ազատամարտիկների շրջանում մեծ հեղինակություն էր վայելում առաջին հերթին իր անձնական որակների, իր ինքնամոռաց ճակատագրի շնորհիվ: Նրա մարտական, զինակից ընկերները ոչ մի վայրկյան չփախվեցին ու չընկրկեցին թշնամու առաջ, ու մինչև վերջ, մինչև հաղթանակ ու զինադադար նրանց ուղեկցում էր իրենց հերոս հրամանատարի աննկուն ոգին:

Աշոտ Բեկորի ռազմական տաղանդի մասին պատմեց մարտընկեր Արմեն Դանիելյանը:

Աշոտի երազանքը Արևմտյան Հայաստանն էր: Միշտ հենաքրքրվում էր հայոց պատմությամբ, որպես պատմաբանի՝ Արմեն Դանիելյանից հարցնում էր՝ ինչպես եղավ, որ հայերը պարտվեցին: Միշտ ասում էր, որ ամեն հայի վրա պիտի պատասխանատվություն լինի դրված, որ ամեն հայ պիտի ինչ-որ բան անի այս հողի համար: Աշոտը գաղափարի զինվոր էր ուսից գլուխ: «Մարդիկ, որոնք մեծ գաղափարի համար են պայքարում, երբեք մանր բաները չեն նկատում», - իր տպավորությունները ներկայացրեց մարտընկերը: Ինստիտուտի մի մասում նրա վաշտն էր տեղակայված, մյուսում ուսանողներն էին դաս անում, գրադը տվել էր գրադարանի պատը փել, գրքերը թափել: Աշոտը կարգադրեց հավաքել և դասավորել, ասաց՝ ավստոսում է, որ կրթօջախները դարձել են զորանոցներ, կրթօջախը պետք է կրթօջախ մնա: Գրքերը հավաքեց, դասավորեց նորից, դաս վրա խաչաձև տախտակներ մեխեց, որ մտնող չլինի, հետագայում ուսանողները կարողանան գրադարանից օգտվել:

Արմեն Դանիելյանը դրվագներ պատմեց Աշոտի մարդկային բարձր որակների մասին: Նա չափից դուրս սիրում էր իր զինվորներին: «Կուզեմայի, որ այսօր ամեն զինվոր իր հրամանատարին սիրեր այնպես, ինչպես Աշոտն էր սիրում, և, հակառակը, ամեն հրամանատար իր զինվորին սիրեր այնպես ինչպես Աշոտն էր սիրում», - ասաց նա :

Նուրբ հոգու տեր էր, հումորով, բայց նաև՝ պահանջկոտ: Պատերազմի ամենաառեղ օրերին, երբ կենաց-մահու կռիվներ էր մղում, Բեկորը ամենախստապահանջ հրամանատարն էր, իսկ դադարների ժամանակ՝ ամենահոգատարը:

Աշոտի գործը այսօր շարունակում են 18-20 տարեկան երիտասարդները:

ՊԲ 8-րդ առանձին մոտոհրաձգային բրիգադում կա նրա անունը կրող վաշտ, որտեղ ծառայող զինվորներից մեկը՝ Ատոմ Եղիազարյանը իր սրտի խոսքն ասաց:

«Ամեն օր քուն մտնելով նրա՝ հեռուներին հառած հայացքի ներքո՝ ես ու համաժառանգակիցներս կամա- ակամա հաճախ ենք խորատուզվում մտքերի մեջ, լուռ ունկնդրում նրա տված ամեն դասը՝ դաս խիզախումի, անձնագոհության: Նրա գաղափարներով սնվում և շարունակելու են սնվել հազարավոր զինվորներ, ինչպես մեր պարագայում: Նրա օրինակը ոչ միայն վաշտի, այլև ողջ գումարտակի համար յուրօրինակ ուղի է, որ տանում է դեպի լույս, հավերժություն: Հպարտորեն են քայլում իմ մայր հողի վրա և ինձ պարտավորված են զգում իմ ժողովրդի ու հայրենակիցների առաջ: Սրանք լոկ խոսքեր չեն, այլ հաստատակամորեն որդեգրած գաղափարներ, որոնք ինձ ուժ են ներարկում: Ծառայության ընթացքում ես նույնպես իրականացրել եմ մարտական հերթապահություն, հանդիմել, որ մեզ պարտադրված ենք լինել քաջ, վեհամեծ ու հայրենապաշտ: Դա են պատգամել անկախության ճանապարհի մահատակները: Մի՞թե կա ավելի հոգեպարար զգացում, քան այն, որ դու ազգի ու հայրենիքի զինվոր ես, որ քեզ հավատում, վստահում ու սիրում է ժողովուրդը: Ես և իմ զինակիցները ողջ խորությանը զգում ենք օրվա խորհուրդի դերն ու նշանակությունը: Մենք կրկին ու կրկին համոզվում ենք, որ պարտավոր ենք զինվորագրվել այն սուբ

գաղափարների պաշտպանությանը, որի համար արժե չխնայել ոչինչ, անգամ՝ կյանքը: Գիտեմ, որ ժողովուրդը ոչ միայն մեծ հույսեր է կապում իմ սերնդի հետ, այլև հավատում է նրա բազկի ուժին, ապավինում նրան: Վստահ եղեք, մեր կաննք ամեն հնարավորն ու անհնարինը, որ մեր ձեռքերումները փոխանցվեն դարեդար», - իր ելույթում ասաց շարքային զինծառայողը:

Բեկորի այրու՝ Նելլի Ղուլյանի խոսքում թանկագին կորստյան հետ կապված վշտին զուգահեռ հպարտության զգացումն է իշխում: «Այսօր ես երջանիկ զգալու առիթներ ունեմ. իմ երեք որդիներից երկուսն ընտրել են իրենց հոր ճանապարհը, դարձել են զինվորական: Այսօր սահմանին կանգնած զինվորը, ի դեմս օգոստոսյան իրադարձությունների, ցույց տվեց, որ հայրենիքի պաշտպանությունը հուսալի ձեռքերում է», - ասաց նա: Ինքն էլ իր պես այրիների հետ եղել է առաջին գծում և համոզվել դրանում, այդտեսակ բանակ ունենալու համար Աշոտը և բոլոր քաջերը չեն խնայել իրենց կյանքը, երազել են ազատ, անկախ, ժողովրդով միաբան լինելու հայրենիք ունենալու մասին:

Իր օրինանքի խոսքն ասաց Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ով նաև մոտիկից է ծանոթ եղել Բեկորին:

Երեկոյին ՊԲ «Ասպետ» համույթի կատարմամբ հնչեցին հայրենասիրական, ոգեշունչ երգեր, այդ թվում՝ Աշոտ-Բեկորին նվիրված երգը ու նրա սիրած երգերից մեկը՝ «Ձախորդ օրերը»:

Աշոտ Ղուլյանի արածն այնքան շատ է ու բովանդակալից, որ կբավականացներ մի քանի կյանք ապրելու համար: Նա հայրենիքի համար կատարեց զինվորի իր բոլոր պարտականությունները: Հիբարավի, գաղափարական անհատները միշտ և ամենուր առաջին գծում են, նույնիսկ՝ մահից հետո:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

## ՇԱՀԵՆ ՄԵՂՐՅԱՆԸ՝ ԱՐՃԱՆԻ ՇԵՐՈՍ



Հոկտեմբերի 24-ին Մարտակերտի շրջանի Տոնաշեն գյուղում հանդիսավորությամբ բացվեց արցախյան ականավոր քաղաքական և ռազմական գործիչ Շահեն Մեղրյանի հուշարձանը, որին ներկա էր ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանը:

ԼՂՀ պաշտպանության կազմակերպման գործում ունեցած բացառիկ ծառայությունների, ցուցաբերած քաջության ու անձնական արիության համար Շահեն Մեղրյանը հետմահու արժանացել է «Արցախի հերոս» բարձրագույն կոչման՝ պարգևատրվելով «Ոսկե արծիվ» շքանշանով: Երկրի ղեկավարը բարձր է գնահատել Շահեն Մեղրյանի դերակատարությունը Արցախի ազգային-ազատագրական պայքարում, մեր պետականաշինության գործում՝ մշտելով, որ նրա կյանքն ու գործունեությունը հայրենիքին անձնվիրաբար ծառայելու լավագույն օրինակ է:

## ԱՐՃԱՆԸ ԵՐԱՆՏԱՊԱՐՏ Է ԻՐ ՇԵՐՈՍՆԵՐԻՆ



Հոկտեմբերի 23-ին Ստեփանակերտ քաղաքում տեղի ունեցավ անվանի գրողավոր, Արցախյան գոյամարտի ակտիվ մասնակից, ԼՂՀ ՊԲ շտաբի նախկին պետ, գեներալ-լեյտենանտ Անատոլի Ջինկիչի կիսանդրու բացման հանդիսավոր արարողությունը, որին մասնակցում էր Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը:

Նախագահ Սահակյանը կարևորել է Անատոլի Ջինկիչի ներդրումը մեր հաղթանակների կերտման, պաշտպանության բանակի ստեղծման և կայացման գործում: Երկրի ղեկավարի խոսքով՝ մայրաքաղաքի՝ Ջինկիչի անունը կրող փողոցում գործարարի հուշարձանի տեղադրումը նրա իշխատակը վառ պահելու լավագույն միջոցներից է:

Տեղեկատվությունը՝ ըստ ԼՂՀ Նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության



### ԱՌԱՔՅԱԼՆԵՐ

## ԻՐ ԳՈՐԾԻ ՆՎԻՐՅԱԼԸ

*Եթե ուսուցիչը սիրում է իր աշխատանքը, նա լավ ուսուցիչ կլինի:*

*Եթե ուսուցիչը սիրում է աշակերտին, ապա նա ավելի լավ ուսուցիչ կլինի, քան նա, ով կարդացել է բոլոր գրքերը, բայց չի սիրում իր աշակերտին:*

*Եթե ուսուցիչը սիրում է և՛ իր աշխատանքը, և՛ իր աշակերտին, նա կլինի կատարյալ ուսուցիչ:*

**Լև Տոլստոյ**



Հոկտեմբերի 5-ին հանրապետությունում մեծ շուքով ուսուցչի մասնագիտացման օրը, մասնագետ, ով, իր առաքելությանը հավատարիմ, կրթում

ու դաստիարակում է սերունդների, ով եղել ու մնում է հայեցի կրթության և դաստիարակության ջահակիրը:

Օրվա առիթով մայրաքաղաքի հան-

*-Տիկին Սեյրանյան, ասում են՝ մանկավարժը նաև մարդկային հոգու ինժեներն է, ի՞նչ կատարում եք այդ առումով:*

-Ուսուցչի համար առաջնային խնդիր պետք է լինեն ուղղամտությունն ու արդարաստությունը, քանզի նրա համար բոլոր աշակերտները պետք է լինեն նույն հարթության վրա: Կարծում եմ՝ ուսուցիչը պետք է լինի խստապահանջ իր առարկայի հանդեպ, իսկ սովորողների նկատմամբ այն չպետք է անցնի թուլատրելի սահմանը՝ վերածվելով կոպտության ու վիրավորանքի:

*-Ձեր աշակերտները տարիներ շարունակ օլիմպիադաներում գրավում են առաջին հորիզոնականները, անգամ՝ ԴԴ-ում և ոչ մեկ անգամ: Համա՞մի՞տ եք, արդյոք, Ս. Օստոգորայսկու այն մտքին, որ «Լավ ուսուցիչը ստեղծում է լավ աշակերտներ»:*

-Առաջին հերթին ուսուցիչը պետք է մեծ սեր ու հետաքրքրություն առաջացնի առարկայի հանդեպ, այդ դեպքում աշակերտն ինքը կփորձի և առարկան և ինքնուրույն կաշխատի իր վրա: Մնում է՝ ուսուցիչը պատրաստակամ լինի բավարարել աշակերտի պահանջը,- համեստորեն շրջանցեց հարցը ուսուցչուհին՝ տալով այսպիսի պատասխան:

Այնուամենայնիվ, ընթերցողն, անշուշտ, համամիտ կլինի վերը նշված մտքին, քանզի դրա ճշմարտացիությունն են վկայում նրա հարյուրավոր աշակերտների ձեռքբերումներն ու մեծ հարթակներում հայտնվելը:

Իբրև խոսքերիս հավաստիք, նշենք նրան աշակերտած սաներից մի քանիսի կարծիքը.

*Լուսինե Բախչիյան* - Ստեփանակերտի 4. Ձհանգիրյանի անվան հ.11 ավագ դպրոցի անգլերենի ուսուցչուհի, «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի հունամիտար ֆակուլտետի ղեկավար:

-Ուսուցիչն Աստծո առաքյալն է երկրի վրա: Ի սկզբանե նրան էր վերապահվել մարդկությանը կրթելու և դաստիարակելու պատասխանատվությունը: Այդ առաքելությունը կատարելու պատրաստակամություն և այն արժանապատվություն կրելու հնարավորություն ոչ բոլորն ունեն: Առավել կարևոր է այդ առաքելությունն իբրև պատիվ ու փառք ուսուցանելն ու աշակերտներին հետևող դարձնելը. այդպիսիք լինում են օժտված և ընտրյալ ուսուցիչները: Հասնիկ Սեյրանյանն այդպիսի ուսուցչուհի է: Նրան են ճանաչել են այդպես՝ վեհ ու ազնիվ կերպարով, անմնացորդ նվիրումով, անհատնում սիրով և ուսանազիտությունն ու աշխատանքը: Նրանով է ինձ համար խորհրդանշվել ուսուցչին, նրա շնորհիվ է իմ մեջ ծնվել պատկառանք դեպի ուսուցիչ և ուսուցչություն: Նա բացառիկ դերակատարու-

րակրթական դպրոցների մի շարք ուսուցիչներ պարզևի արժանացան ոչ միայն ոլորտի պատասխանատուների, այլ նաև հանրապետության Նախագահի կողմից:

Ստորև ներկայացնում ենք նրանցից մեկին:

Համեստ, բարեկիրթ ու հմայիչ արտաքինով այս հայուհին, ով անգամ իր կեցվածքով է անծանոթին հուշում իր մասնագիտության մասին, խնդրեց հնարավորինս համեստ ներկայացնել իրեն, քանզի մշտապես խուսափում է հանրության ուշադրությունից:

Հասնիկ Սեյրանյան: Ծնվել ու մեծացել է Ստեփանակերտում՝ մտավորականի ընտանիքում: Մայրը մանկավարժ էր, հայրը՝ ճարտարագետ: Սովորել է Ստեփանակերտի հ. 8 միջնակարգ դպրոցում: Ավարտելուց հետո ընդունվել է Երևանի Բոլոր սովի անվան օտար լեզուների ինստիտուտի անգլո-ռուսերեն բաժինը: Ինստիտուտում ավարտելուց հետո առ այսօր հոգու ողջ թելերով նվիրված է սիրելի մասնագիտությանն ու երեխաներին. ինչպես ինքն է փաստում, ամբողջ կյանքում սիրել է միայն մի մասնագիտություն և իրեն լավ է զգում միայն դասարանում՝ շրջապատված սիրելի աշակերտներով և նրանց կողմից հնչեցվող տարաբնույթ հարցերով:

թյուն է ունեցել թե՛ իմ մասնագիտական կողմնորոշման, թե՛ իմ աշխատանքային գործելաճի ընտրության հարցում: Այսօր են ուսուցիչների մեծ ու զորեղ բանակի մի գինձիկն են, և հպարտ եմ, որ իմ կողքին դարձյալ Հասնիկ Սեյրանյանի ներկայությունն ունեն՝ որպես իմ լավագույն «իրանամատարի»: Ընդհանրապես եմ նրան ի խորոց սրտի, մաղթում եմ առողջություն, թող միշտ այսպես պայծառ լինի նրա անունը իր արդար գործի պես:

*Մարիամ Գրիգորյան* - «Ստեփանակերտի 4. Ձհանգիրյանի անվան համար 11 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 11-րդ բն. 2 դասարանի աշակերտուհի.

-Անգլերենիս ուսուցչուհին՝ Հասնիկ Սեյրանյանը, հիասքանչ մանկավարժ է և հոգեբան: Գալով ավագ դպրոց՝ նրա շնորհիվ իմ անգլերենի գիտելիքների պաշարը մեծացել է: Նա այնպես է վարում դասը, որ բոլոր աշակերտները հավասարապես մասնակցում են դրան: Նա հաշվի է առնում բոլորի ընդունակություններն ու կարողությունները և յուրաքանչյուրի նկատմամբ անհատական վերաբերմունք է դրսևորում: Բոլորս էլ հաճույքով ենք հաճախում նրա դասերին, քանզի որ նա ոչ միայն փորձառու ուսուցիչ է, այլև շատ լավ հոգեբան ու հոյակապ անձնավորություն, ով պատրաստ է ցանկացած պահի իր խորհուրդներով օգնել յուրաքանչյուր աշակերտի: Նա ունի բոլոր այն հատկանիշները, որոնցով պետք է օժտված լինի իսկական ուսուցիչը:

*Աննա Արզումանյան* - «Ստեփանակերտի 4. Ձհանգիրյանի անվան համար 11 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 11-րդ բն.1 դասարանի աշակերտուհի.

- Անգլերենիս ուսուցչուհին՝ Հասնիկ Սեյրանյանը, վաստակաշատ և փորձառու մանկավարժ է, որի անխոց աշխատանքի շնորհիվ աշակերտները հասնում են մեծ հաջողությունների: Նա բարի ու մեծահոգի անձնավորություն է, բայց բնավորությամբ պահանջկոտ է և կարողանում է երեխաների մեջ սեր արթնացնել դեպի գիրքը, անգլերենի գիտելիքների գանձարանը մատչելի դարձնել յուրաքանչյուրի համար:

Տիկին Սեյրանյանը ոչ միայն բանիմաց մասնագետ է, այլև մեծատառով մարդ, որի համար էլ վայելում է իր գործընկերների և աշակերտների սերն ու հարգանքը: Վստահ եմ, որ նա կշարունակի իր գործունեությունը՝ դաստիարակելով խելացի և հայրենիքին արժանի սաներ:

*- Հասնիկ Սեյրանի: Որպես վաստակավոր մանկավարժ՝ համամի՞տ եք, արդյոք, հնչեցվող այն կարծիքներին, որ այսօրվա աշակերտները շատ առումներով՝ թե՛ գիտելիքների և թե՛ պահվածքի, գիջում են մահվանից:*

- Միանգամայն դեմ եմ մտն կարծար-

Մ. Կալինինն ասել է. «Ուսուցիչն աշխատում է ամենապատասխանատու խնդրի վրա. նա ձևավորում է մարդուն»:

Եթե խորհելու լինեմք այս աֆորիզմի շուրջ, հստակ կարելի է ասել, որ տարիներ շարունակ հենց այդ սկզբունքով էլ շարժվել է տիկին Սեյրանյանը, ով 6-րդ դասարանից արդեն հստակ գիտեր իր կյանքի ուղին, ում ներշնչանքի աղբյուրը դարձավ իր օտար լեզվի ուսուցչուհի Նիցա Ղուկասյանը:

-Այլ մասնագիտություն իմ կյանքում չեմ պատկերացնում: Հոգուս խորքում ինձ համար երկրորդ մասնագիտություն պատկերացնում եմ միայն հոգեբանությունը, քանզի այս երկու մասնագիտությունները մանկավարժությունն ու հոգեբանությունը, անբաժանելի են: Ուսուցիչը պետք է անհատական վերաբերմունք ցուցաբերի յուրաքանչյուր աշակերտի հանդեպ, լինի համբերատար: Պակաս կարևոր չէ հոգեբան - ուսուցիչ լինելուն զուգահեռ նաև լավ մասնագետ լինելը, քանզի այսօրվա աշակերտի աչքից չի կարող վրիպել ոչինչ,- նշում է Սեյրանյանը:

Ծավալվում է ջերմ ու անկեղծ մի զրույց, ու ծնվում են տրամաբանական հարցեր.

տիպին: Ես կարծում եմ, որ այսօրվա աշակերտը պարզապես մեծանում է մեծ տեխնոլոգիաների դարաշրջանում, հետևաբար, նա բավականին տարբեր է մահվան սերնդի աշակերտներից: Ինչ վերաբերում է դաստիարակության պակասին, բոլոր ժամանակներում էլ դա եղել է, կա ու կլինի: Պարզապես անհրաժեշտ է մնան աշակերտների հանդեպ ցուցաբերել հատուկ վերաբերմունք: Երբեմն ուսուցչի վերաբերմունքը կարող է ճակատագրական լինել աշակերտի համար և՛ դրական, և՛ բացասական առումներով: Ահա թե ինչու պետք է զգուշ վարվել երեխայի հոգեբանության հետ:

*- Դուք օրերս հանրապետության Նախագահի հրամանով արժանացել եք վաստակավոր ուսուցչի կոչման: Ի՞նչ է այդ պարգևը Ձեզ համար:*

- Երևի թե յուրաքանչյուր մարդ, ով ապրում է իր աշխատանքով, հոգու խորքում երազում է գնահատված լինել: Այսօր ես ինձ շատ երջանիկ ու երախտապարտ եմ զգում՝ մնալ ուշադրության արժանացալու համար: Այնուամենայնիվ, կցանկանայի մի բան հստակ նշել՝ այս տարիների ընթացքում չի եղել մի օր, որ ես չզգամ իմ սիրելի աշակերտների կողմից իմ նկատմամբ դրսևորվող սերն ու հարգանքը, ինչն ամենակարևորն է յուրաքանչյուր ուսուցչի համար: Ըստ իս՝ դրանից ավելի կարևոր պարզև չկա ուսուցչի համար:

*- Թերևս, վերջին հարցը, ի՞նչ կցանկանայիք մտածել այսօրվա դպրոցին, աշակերտին և ընդհանրապես Արցախի ժողովրդին:*

-Այսօրվա աշակերտը գերանարաբեռնված է անհիմն ծրագրերով, ինչը հանգեցնում է այն բանին, որ լավ սովորող աշակերտը ժամանակի սղության պատճառով չի հասցնում զբաղվել ոչ սպորտով, ոչ այլ հանրօգուտ աշխատանքով: Կցանկանայի խոսքս առաջին հերթին ուղղել պետական այրերին՝ հնարավորինս թեթևացնել ծրագրերը ու դասագրքերը չճանաբեռնել ավելորդ տեղեկատվությամբ, քանզի այսօրվա աշակերտն արդեն մեծ խնդիր ունի թե տեսողության և թե առողջության հետ կապված: Ուսուցիչներին կբարենադրեն համբերություն մնալ պատասխանատու և պատվաբեր աշխատանքում, արցախցիներին՝ խաղաղություն ու բարգավաճ երկիր: Իսկ սիրելի աշակերտներին կցանկանայի հղել իմ խորհուրդն ու պահանջը՝ մասնագիտության ընտրության հարցում լինել շատ զգուշ, ուսուցչի և բժշկի մասնագիտություններն այն եզակիներից են, որ պետք է ընտրել հոգով: Այլապես մարդ չի կարող երջանիկ լինել, եթե ընտրել է սխալ մասնագիտություն:

**Կրիս ԴԱԼՄՆԱ**

## ՄԵՐ ՀՈՒՇԵՐՈՒՄ ԿՄՆԱԸ ՈՐՊԵՍ ՊԱՅՏԱՌ ԱՐԵՉԱԿ

Սիրում եմ «Լուսարար» թերթը: Ամեն անգամ թերթի մոր համարը ընթերցելիս գլուխս թաղում եմ նրա էջերում և կարծես ծարաված երեխայի նման մի բաժակ ջուր փնտրում այնտեղ:

Սուզվել եմ հերթական համարում: Աչքերս հանեցի «խորհուրդ-պատգամ՝ երիտասարդ ուսուցիչներին» հոդվածին: Թեպետ ես արդեն երիտասարդ ուսուցչուհի չեմ և կյանքիս 34 գարունները ներդրել եմ մատաղ սերնդի կրթության և դաստիարակության պատվաբեր գործին, սակայն մեծ հետաքրքրությամբ ընկղմվեցի հոդվածի մեջ: Կես առ կես ընթերցելով՝ գլխի մեղմ շարժումներով հաստատում էի կետերը: Չէի շտապում կարդալ հեղինակի անունը: Ուղղակի սիրում էի վերջում իմանալ ցանկացած նյութի հեղինակի անունը: Հոդվածի 6-րդ կետում չհամբերեցի, և աչքերս սասեցին դեպի ներքև: Սուրայա Ղազարյան, գյուղ խնամապա...

Սիրտս թարտաց, հոգիս խանդավառվեց, շեղվեցից տառերը, բառերը, կետերը: Ախր այս պատգամը վաղուց իմ արյան մեջ է և իմ հոգու խորքում տեղ ունի գրաված: Չէ՞ որ այդ պատգամն իմ սիրելի ուսուցչուհու պատգամն է, որ գալիս է դեռևս 20-րդ դարի վերջից և հնչելու է նույնիսկ 21-րդ դարի վերջին, քանզի ընկեր Ղազարյանը բարի հետք է թողել իր ուսուցանած բոլոր սերունդների վրա:

Խորատուզվեցի հիշողություններիս մեջ... Ասես երեկ էր, որ մտաք դասարան: Հիշում եմ, Ձեր հագին ծաղկազարդ շոր էր, որի գույները վառ երանգ տալով Ձեր բարի ու ժպտերես դեմքին, զարուս սիռեցին դասարանում ու ողջ դպրոցում: Հետագայում այդ գարունները պետք է տարածվեին շրջանում ու հանրապետությունում մեկ: Հենց այդ օրը ես հասկացա, որ պետք է ընտրեմ ուսուցչի մասնագիտությունը: Կատարվեց ցանկությունս, դարձա ուսուցչուհի՝ միշտ երազելով թեկուզ մի քիչ մանվել Ձեզ, վստահ ու անվարան քայլել այդ ճանապարհով, ինչպես Դուք եք քայլել: Դուք իմ հուշերում, մանկության երազներում Ձեր հաստատուն կնիքն եք դրել: Ձեզ եմ պարտական իմ ունեցած գիտելիքների համար և խոնարհվում եմ Ձեր առջև:

Սիրելի ընկեր Ղազարյան: Այսօր անցել էք վաստակած թոշակի, սակայն կարևոր չէ՝ տանն եք, թե դպրոցում: Դուք Ձեր աշակերտների հիշողության մեջ կմնա որպես պայծառ արեգակ, որի շողերից բխող առատ լույսն ու ջերմությունը հավիտյան կտաքացնեն ու կլուսավորեն նրանց:

Վայելեք Ձեր կյանքի մնացած տարիները, Ձեզ երկար տարիների առողջ և անխռով կյանք:

**Միրա ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**  
**Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի դասվար**

## ՄԱՆՈՎ ԿՐԹԵԼԸ ԵՎ ՆԱՅԻՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ Է

Հմայագեղ, բարյացակամ, երիտասարդական ավյունով լեցուն, մանկավարժի գեղեցիկ կենսագրություն կերտած, բանիմաց ու ողջախոհ ուսուցչուհի, որ հեղինակ է օրինակելի ու բովանդակալից բազում դասերի, հետաքրքրաշարժ միջոցառումների: Նա իր գործի նվիրյալն է, աշխատում է անձնավարձ, առանց ջանք խնայելու: Չնայած երիտասարդ տարիքին՝ իր ուսերին է կրում նաև ուսումնական գծով փոխտնօրենի դժվարին պարտականությունները, որոնք կատարում է մեծ պատասխանատվությամբ: Նա վայելում է մանկավարժական կոլեկտիվի և աշակերտության սերն ու համակրանքը: Ամենացորդ սիրով ու նվիրումով իր սաների հանդեպ լցված մանկավարժը ոչ միայն գնահատված ուսուցչուհի է, այլև սիրված կին ու հոգատար մայր, խստապահանջ ու խորաբախանք, անհանգիստ ու պրպտուն, կրտսեր սերնդի կրթության ու դաստիարակությանը իրեն անվերապահորեն նվիրած հայուհի:

Արմինե Դանիելյանը ծնվել է 1984 թ. Չափար գյուղում: Ավարտել է ԱրՊՀ քիմիայի և կենսաբանության բաժինը: 2001 թվականից աշխատում է Շահումյանի շրջանի Եղեգնուտի Պ. Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցում: 2004 թվականին, մատաղ սերնդի կրթության և դաստիարակության բնագավառում ձեռք բերած հաջողությունների համար, պարգևատրվել է կրթության և գիտության նախարարության պատվոգրով:

2005- 2013թթ. աշխատել է որպես դաստիարակության գծով փոխտնօրեն, իսկ 2013թ. սեպտեմբերից ուսումնական գծով փոխտնօրեն:

Եղեք միշտ այդպես գեղեցիկ ու հմայիչ և մատաղ սերնդի սիրով պարուրված:

*Եղեգնուտի Պ. Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ*

ԳՆԱՀԱՏԱՆՔ

ՎԱՍՏԱԿ ԵՎ ՊԱՏԻՎ

Պատիվ. ահա իսկական գեղեցկությունը:

Ռ. Ռոլան

Նրա անսահման բարությունն ու ազնվությունը պարզապես ծնվել են հենց իր հետ և հավատարիմ ուղեկիցը եղել ողջ կյանքում: Տարիքն առած այդ կնոջ աչքերում կարելի է տեսնել դեռևս չմարած կրակներ, նրա հայացքը լի է ջերմությամբ և մի յուրահատուկ մաքրությամբ, ու երբ նայում է քեզ, զգում ես, թե ինչպիսի բարության ցածր մարդ է նա, ով իր ողջ գիտակցական կյանքը նվիրել է մանուկներին և իր հարազատներին:

Ռոմելա Մարգարյանը ծնվել է 1943 թ. օգոստոսի 14-ին Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում: Ծակատագիրը Ռոմելային հասցրեց նույն շրջանի հնապատ գյուղը, որն էլ դարձավ իր համար հարազատ մի օրրան, առանց որի նա այլևս չէր պատկերացնում իր կյանքը: Ռոմելան ամբիջապես նվաճեց ինստիտուտի հասարակության սերն ու հարգանքը՝ դառնալով գյուղի նվիրյալ անդամներից մեկը: Տարիներ շարունակ իր բարոյական և մաքուր կերպարով օրինակ դարձավ շատ ու շատ մարդկանց համար:

Շուրջ 50 տարի Ռոմելա Մարգարյանն աշխատեց մանկավարժական ասպարեզի սպասարկման ոլորտում:

Սեպտեմբերի 8-ին հնապատի մանկապարտեզում կազմակերպվեց տոնական միջոցառում: Ներկա էին Ասկերանի շրջվարչակազմի ղեկավար Սերգեյ Գրիգորյանը, շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Շահեն Աղաբաբյանը, գլխավոր մասնագետ Սվետլանա Ասրյանը,

հնապատի Ա. Գայրապետյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Զավեն Բեգլարյանը, հնապատի համայնքի ղեկավար Սամվել Շահրամանյանը, շրջանի արհմիության նախագահ Գայանե Գաբրիելյանը, Ակնաղբյուրի միջնակարգ դպրոցի տնօրեն Ժորա Մարգարյանը, հյուրեր: Հավաքվել էին՝ հարգելու և զննատեսելու Ռոմելա Մարգարյանի 50-ամյա վաստակը:

Բացման և ողջույնի խոսքով հանդես եկավ մանկապարտեզի վարիչ Լուսինե Ավանեսյանը.

«Այսօր մենք մեծարում ենք մի լավ մարդու, ով իր ողջ էությանը արժանացել է մեծարանքի: Շուրջ 11 տարի է, ինչ ինձ բախտ է վիճակվել աշխատելու տիկին Ռոմելայի հետ: Նրա աշխատանքի մեջ ես տեսել եմ անմնացորդ նվիրվածություն իր գործին, հոգատարություն և անհուն սեր երեխաների հանդեպ: Նրա եփած ճաշերի համն ու հոտը, որոնց մեջ իր ողջ հոգին է ներդրել, զերում են մանկապարտեզի սաներին և, հանդակած եմ, միշտ կմնան նրանց հիշողությունների մեջ:

Այս միջոցառման նպատակն է արժևորել Ռոմելա Մարգարյանի անխոնջ աշխատանքը և շնորհակալություն հայտնել նրան այն բոլոր տարիների համար, որ նվիրել է երեխաներին:

Շրջվարչակազմի ղեկավար Սերգեյ Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց տիկին Ռոմելային պարտաճանաչ և հոգատար աշխատանքի համար՝ մաղթելով նրան առողջություն և խաղաղ հանգիստ, որը նա վաստակել է ամենայն բարեխղճությամբ:

Ելույթ ունեցավ նաև կրթու-

թյան բաժնի վարիչ Շահեն Աղաբաբյանը: Նա, կարևորելով յուրաքանչյուր մասնագիտություն, նշեց, որ ամեն ոք պետք է լինի իր մասնագիտության գիտակը, իր գործի հավերժ սիրահարը: Ռոմելա Մարգարյանը հմուտ խոհարար լինելով՝ նաև ունի մարդկային բազմաթիվ արժանիքներ: Իզուր չէ, որ այսօր նա նվաճել է յուրաքանչյուրիս սերն ու հարգանքը: Ապրել և ապրում է ամանձնական կյանքով, նրա համար իր սիրելի երեխաներից բացի ուրիշ աշխարհ չկա:

Սրտառուջ էր համայնքի ղեկավարի խոսքը, ով իր հիշողություններով մի առանձնակի ջերմությամբ լցրեց ներկաների սրտերը՝ տանելով նրանց դեպի տարիների խորքը:

Ուշագրավ էր նաև կրթության բաժնի գլխավոր մասնագետ Սվետլանա Ասրյանի սրտի խոսքը.

«Այսօր այն օրն է, երբ պետք է շնորհակալություն հայտնենք Ռոմելա Մարգարյանին՝ ինքնուրուց աշխատանքի և նվիրումի համար: Նա ծնվել ու դաստիարակվել է մանկավարժների ընտանիքում, որտեղ սերմանվել է լինել լավ մարդ, նվիրված ընկեր: Նրա եղբայրն ու քույրերը լավագույն մանկավարժներ են, և ինքը, չունենալով մանկավարժական կրթություն, մղվել է դեպի մանկավարժությունը և տարիներ շարունակ աշխատել այդ բնագավառում ու շփվել ուսուցիչների հետ: Աշխատել է որպես տնտեսավար, բուժետապան, խոհարար և միշտ իրեն դրսևորել լավագույն հատկանիշներով: Մշտապես սրտաբաց, բարի, հոգատար ու ժպտերես՝ ահա այսպես են ծանաչում Ռոմելային խնամատնի-

ները: Այնուհետև հանդես եկան մանկապարտեզի սաները և իրենց ելույթում մեծարեցին սիրելի խոհարարին՝ խոստանալով երբեք չմոռանալ նրա եփած ճաշերի անուշ համն ու բույրը:

Վերջում Ռոմելա Մարգարյանը պատվոգրեր և նվերներ ստացավ շրջվարչակազմի ղեկավար Սերգեյ Գրիգորյանի, կրթության բաժնի վարիչ Շահեն Աղաբաբյանի, արհմիության նախագահ Գայանե Գաբրիելյանի և մանկապարտեզի վարիչ Լուսինե Ավանեսյանի կողմից:

Շրջվարչակազմի ղեկավարի կողմից ստացված հնապատի համայնապատկերը ներկայացնող նկարը մեծ ուրախություն պարգևեց Ռոմելա Մարգարյանին՝ նրա մեջ վերստին ամրապնդելով սերը դեպի հարազատ հնապատը:

Կյանքում ամեն մի մասնագիտություն ինքնին կարևոր է և ունի իր յուրահատուկ դերն ու նշանակությունը: Հիմալի, երջանիկ է այն մարդը, ով իր մասնագիտության հմուտ գիտակը լինելով՝ միաժամանակ իր վարքագծով կարողանում է վայելել հասարակության համակրանքն ու սերը և իր ազնվությամբ միշտ մնում կյանքի բարձունքներում: Իսկ ինչպես ասել է Արիստոտելը. «Բարոյապես լավ մարդուն է ավելի սազական դրսևորել իր ազնվությունը»:

Ահավասիկ, այդպիսի մարդկանցից է Ռոմելա Մարգարյանը:

Կարինե ԲԱՆՇԻՅԱՆ

ՄԵԾԱՐԱՆԻ ՄԻՋՈՅԱՌՈՒՄ ՌԻՍՈՒՅԻՉՆԵՐԻ ՊԱՏՎԻՆ

Հոկտեմբերի 11-ին Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցում կազմակերպվեց միջոցառում՝ նվիրված Ուսուցչի օրվան: Ներկա էին դպրոցի տնօրինությունը, ուսուցիչներ, ավագ դպրոցի աշակերտներ: Դահլիճի պատվավոր տեղում էին դպրոցի թոշակառու ուսուցիչները, ովքեր այս կրթօջախի մշտապես սպասված ու սիրված հյուրերն են:

Ողջույնի խոսքով հանդես եկավ դպրոցի տնօրեն Կառլեն Մայիլյանը: Նա շնորհավորեց գործընկերներին մասնագիտական տոնի առթիվ՝ մեկ անգամ ևս արժևորելով ուսուցչի դերը մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում և առհասարակ հասարակության մեջ:

«Ուսուցիչն իր պահվածքով պետք է տարբերվի բոլորից՝ լինելով հավասարակշռված, բարեխիղճ, մաքուր: Մեր աշխատանքը կապված է երեխաների հետ, և պարտավոր ենք հասկանալ նրանց լեզուն, լինել հանդուրժող ու նվիրվել նրանց դաստիարակությանը լիովին»:

Այնուհետև հանդես եկան դպրոցի աշակերտները, որոնք իրենց խոսքում մեծարեցին ու զննատեսեցին ուսուցչին:

Միջոցառումը զեղեցիկ էր և կազմակերպված բարձր մակարդակով: Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան դպրոցում գիտեն հարգել ու զննատեսել ուսուցչի աշխատանքը, ու մնա միջոցառումներն արդեն բարի ավանդույթ են դարձել:

Ես՝ որպես այս դպրոցի շրջանավարտ, նույնպես միանում եմ բոլոր շնորհավորանքներին և ցանկանում երախտագիտություն հայտնել դպրոցի տնօրինությանը՝ թոշակի անցած մեր պատվելի մանկավարժներին մշտապես մեծարանքի և հարգանքի արժանացնելու համար:

Կ. ԲԱՆՇԻՅԱՆ

ԵՐԶԱՆԻԿ ԵՄ, ՈՐ ՌԻՍՈՒՅԻՉ ԵՄ

Ուսուցիչ... բարձր ու վեհ կոչում, ինչին ձգտել և երազել են դեռ աշակերտական նստարանից: Ինչքան սեր և խանդավառություն կա այս մի հատիկ բառում: Դեռ դպրոցական տարիներից ուսուցիչ ասելիս հոգիս փոթորկվում էր, սիրտս լցվում և ապրում էի շատ հարազատ ու զեղեցիկ մի զգացողություն, իսկ այսօր ես երջանիկ եմ, որ ուսուցիչ եմ:

Մատաղ սերնդի կրթության և դաստիարակության, նրա ներաշխարհի ձևավորման գործում ամփոխարինելի է ուսուցչի դերը: Ինձ համար մեծ երջանկություն է ունենալ կարգապահ, խելացի և աշխատասեր աշակերտներ: Դպրոցում անցկացրած յուրաքանչյուր օրն ինձ համար տոն է, ցնծություն: Ծիշտ է, այդ վեհ կոչումը շատերի համար պարզապես դարձել է սովորական աշխատանք, բայց ես անչափ հպարտ եմ, որ ուսուցիչ եմ: Ես ամբողջ էությամբ սիրում եմ իմ աշխատանքը, իմ աշակերտներին և ինձ համար այնքան հարազատ դարձած դպրոցը:

Մասնագիտական անցած տոնի առթիվ շնորհավորում եմ բոլոր ուսուցիչներին և խոնարհվում նրանց վաստակի առաջ: Ծնորհավորում եմ նաև իմ գործընկերներին՝ Հայրուրթի շրջանի Ռիստաճորի Ա.Մկրտչյանի անվան դպրոցի ուսուցչական կոլեկտիվին՝ դպրոցի տնօրեն Ա.Արզումանյանի գլխավորությամբ: Այս վեհ և առաքինի աշխատանքում նրանց մեծ համբերություն և անսահման սեր են ցանկանում:

Իմ խորին երախտագիտությունը, մեծ սերն ու հարգանքն են հայտնում բոլոր նրանց, ովքեր եղել են իմ ուսուցիչները դպրոցում և համալսարանում: Նրանք շատ են, բայց ուզում եմ հիշատակել իմ ամենամեծ ուսուցչի անունը, ումից սովորել եմ ոչ միայն դպրոցական գիտելիքներ, այլ նաև կյանքի: Նրա տված խորհուրդներն ու խրատները ես երբեք չեմ մոռանա, նրա ծայրը ամեն պահի հնչում է իմ ականջին: Այդ մեծ ուսուցիչը Ռոգա Հարությունյանն է, ով այսօր, ցավոք, չկա: Նրա մնա ուսուցիչների կարիքը այսօրվա դպրոցը շատ է զգում:

Սյուզաննա ԳԱՐՍՅԱՆ  
Հայրուրթի շրջ. Ուլարաճորի  
Ա.Մկրտչյանի անվ. միջն.դպրոցի  
հ. լեզվի եւ գրականության ուսուցչուհի

ԹՈՂ ԺՊԻՏԸ ԵՐԲԵՔ ԶԼԵԻ ԶԵՐ ԲԱՐԻ ՌԻ ԼՈՒՍԱՎՈՐ ԴԵՄԵԻ

5 -Ընկ. Դադայանը շատ լավ ուսուցչուհի է, ուշադիր ու խստապահանջ:

-Դպրոցում նա մայրական հոգատարություն է ցուցաբերում մեր հանդեպ, դասերի ժամանակ մեր հարցերից չի հոգնում, համբերատար պատմում է, բացատրում, շարունակում է ընկերուհուն Արփինե Զաքմազյանը:

-Ընկ. Դադայանը միշտ իր անձնական գրադարանի գրքերը մեզ է տրամադրում, պատմում են Լուսինեն Ու Սանանան: Իսկ երկին ու Նիկոլայը, հատատելով ընկերուհիների ասածները, ավելացնում են.

-Ընկ. Դադայանի ժամերին երբեք չենք ձանձրանում և ամենևին էլ չենք նկատում, թե ժամն ինչպես անցավ:

Ես հոգու խորքում ուրախանում էի: Ուրիշ էլ ո՞վ, եթե ոչ աշակերտը կարող է այդպես ճիշտ զննատեսել ուսուցչին:

Ստելա Դադայանը ծնվել է 1954թ.օգոստոսի 6-ին Հայրուրթի շրջանի Մարիամաձոր գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի ութամյա դպրոցում: Միջնակարգ ավարտել է հարևան Տող գյուղում: 1977թ. ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայոց

լեզվի և գրականության բաժինը: Նույն թվականին էլ ամուսնանալով՝ ճակատագրի բերումով աշխատանքի է անցնում Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցում:

Այսօր Ս. Դադայանն արդեն 60 տարեկան է: Տարիներն ամենևին էլ չեն կարողացել փոխել նրա կենսուրախ բնավորությունն ու մեծ եռանդը:

Իր բազմազարդ աշխատանքում (8-րդ և 10-րդ դասարաններում դասավանդում է հ. լեզուն և գրականություն, ունի դաղդեկական դասարան, դպրոցի արհմիության նախագահն է) նվիրյալ ուսուցչուհու կյանքի օրերն ու տարիները սահել են աննկատ՝ թողնելով մի լուսավոր հետազոծ: Մագերի ճերմակը յուրահատուկ պատկառանք է ներշնչում բոլորի՝ թե սիրասուն աշակերտների, թե գործընկերների և թե հասարակության մեջ: Կողքից նայելիս պարզ զգացվում է, որ իմաստավորված է նրա կյանքը, քանզի ընկ. Դադայանը բարի, ազնիվ, արդարադատ, մի խոսքով՝ մարդկային լավագույն գծերով օժտված ուսուցիչ է, իսկ ինչպես ասել է ամերկացի պատմաբան Ջեյմի Ադամը. «Ուսուցիչը հավերժություն է: Ոչ ոք չի կարող ասել, թե երբ է ավարտվում նրա ազդեցությունը»:

Վստահ կարող են ասել, որ ընկ.Դադայանը երջանիկ կին է, որովհետև ունի օրինակելի ընտանիք՝ համծիրն Էդիկ Խանփերյանի նվիրված ու գործունյա ամուսին, չորս դաստիարակված երեխաներ: Աղջիկներից երկուսը՝ Ռուզաննան ու Քրիստինեն, սիրելի մոր մասնագիտությունն են ընտրել:

Նա երջանիկ է, որովհետև 37 տարի շարունակ աշխատում է իր սիրած մասնագիտությամբ՝ սաների հոգում ներարկելով այն լավն ու բարին, այն վեհն ու վեհն, որոնք ամփոփում են իրենց մեջ մեր ճոխ լեզուն, մեր սուրբ մայրենին:

Սիրելի ընկ.Դադայան, սրտանց շնորհավորում ենք Ձեզ՝ հոբելյանի կապակցությամբ, ցանկանում ամուր առողջություն, արևաշատություն, մանկավարժական եռանդի կրկնապատկում, ուրախություններով լեցուն խաղաղ կյանք:

Թող ժպիտը երբեք չլքի Ձեր բարի ու լուսավոր դեմքը:

Լաուրա ԱԼԹՈՒՅԱՆ  
Հայրուրթի շրջ. Ա.Խանփերյանի  
անվ. միջն.դպրոցի հ.լեզվի եւ  
գրականության ուսուցչուհի, ՄԴԱԿ



ԵՌՈՂԱԿ

ԴՊՐՈՑԸ, ԸՆՏԱՆԻՔԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոց-ընտանիք-հասարակություն կապի ամրությունն ապահովում է մատաղ սերնդի դաստիարակությունն ու կրթությունը: Սա մի եռամիասնություն է, որն առաջնիչ ուժ է անհատի՝ իր տեղը կյանքում գտնելու, հաստատելու համար:

Այս եռոյակ շղթայի մեջ դպրոցը կենտրոնական տեղ է զբաղեցնում:

1. Երեխան կրթվում, դաստիարակվում է դպրոցում:

Իսկ դպրոցում կենտրոնական դիրք է զբաղեցնում ուսուցիչը: Ուսուցչի ասածները յուրաքանչյուր ընտանիքում պետք է խրախուսվեն: Նախ ուսուցիչը պետք է հասարակության մեջ լինի հարգված, խելացի, կիրք, բարոյական բարձր արժանիքներով օժտված անձնավորություն:

Ամեն անգամ ծնողական նոր կուլտիվի հետ դաստիարակչական թեմաներով կիսվելուս ժամանակ ասում եմ.«Եթե անգամ լինեն պահեր, որ ինձնից դժգոհ լինեք, ես ձեզ խնդրում եմ՝ ձեր դժգոհությունը չարտահայտեք երեխայի մոտ: Արեք այնպես, որ ձեր երեխաները սիրեն և հեղինակություն համարեն իրենց ուսուցչին»: Եվ միշտ շեշտում եմ, որ դա առաջին հերթին պետք է ոչ ինձ, այլ իրենց՝ երեխաներին: Եթե ուսուցիչը աշակերտի համար դարձրեց հեղինակություն լինելուց, դաստիարակության գործը երբեք առաջ չի գնա:

Դպրոցն այն դարբնոցն է, ուր

խելամիտ, հոգատար ուսուցչի հովանու տակ դաստիարակվել կարող է ամենամոտեցիկ համարվող աշակերտը: Պարզապես մի քիչ ջերմություն, մի քիչ հոգու կրակ, մի քիչ սրտանոտ գրույց, ու երեխան ձգվում է դեպի քեզ: Եվ տեսնում ես, որ կարծրությունը փոխարկվում է փխրունության, ու դու կարող ես նրան ծռել, ձև տալ քո ուզածի պես:

Ուսուցիչը, անկախ նրանից, թե որ օղակում է դասավանդում, պետք է խորը տիրապետի այն առարկային, որը դասավանդում է: Ուսուցիչը պետք է լինի բազմակողմանի գարգացած, լինի սկզբունքային, սակայն պետք եղած պահին ընդունի իր սխալը, լավ օրինակ ծառայի ոչ միայն աշակերտների, այլև ծնողների շրջապատի համար: Ինչքան անկեղծություն լինի ուսուցիչ-ծնող-աշակերտ հարաբերություններում, այնքան այդ կապն ամուր կլինի:

Քանի որ ուսուցիչը փոխհարաբերության մեջ է մտնում հասարակության տարբեր շերտերի, տարբեր սոցիալական կացության, տարբեր կրթական մակարդակ ունեցող մարդկանց հետ, ուստի պետք է յուրաքանչյուրին անհատական մոտեցում ցույց տա:

Անկախ նրանից՝ երեխան ինչպես է սովորում կամ ինչ անընդունելի արարք է թույլ տվել, չպետք է վիրավորել ծնողի ինքնասիրությունը: Պետք է այնպես անել, որ ծնողների մեջ վստահություն առաջանա

ուսուցչի հանդեպ: Նման դեպքերում ավելի է ամրանում ծնող-ուսուցչի կապը, որն էլ խթանում է ուսումնական գործընթացն արգասաբեր դարձնելը:

Ուսուցիչը պետք է անընդհատ զբաղվի ինքնակրթությամբ, պետք է դասավանդման նոր մեթոդների փնտրտուքի մեջ լինի:

Այդ մեթոդների մասին ուսուցիչը պետք է տեղյակ պահի ծնողներին, որպեսզի ծնողներն էլ տանը երեխաներին չվարժեցնեն իրենց իմացած եղանակներով, այլ այնպես անեն, որ երեխաները ինքնուրույն կարողանան պատրաստել դասերը:

Վարժեցնելը հակասում է ուսումնական գործընթացին:

Երեխային պետք է սովորեցնենք սովորել: Մենք (ուսուցիչ ու ծնող) պետք է ակամատես լինենք նրա ինքնուրույն սովորելուն, օգնողի, ուղղություն ցույց տվողի առաջատար դերում լինենք: Ինչպես են սովորում մեքենա վարելը: Սովորել ցանկացողը ինքնուրույն վարում է, ղեկը սովորողի ձեռքում է լինում, ուղղություն տալիս են կողքից: Նույնը պետք է լինի դպրոցական կրթական համակարգում:

2. Երեխան կրթվում է ընտանիքում:

Յուրաքանչյուր ընտանիք մի առանձին աշխարհ է, ուր կան ընդունված օրենքներ, ստեղծված կենսալույս յուրօրինակ չափանիշներ:

Յուրաքանչյուր երեխա իր հետ

դասարան է բերում իր ընտանիքում տեսածն ու լսածը: Ասում են՝ երեխան ընտանիքի հայելին է: Եվ այդ հայելու արտացոլանքում հայտնված բացասական ուսուցիչը պարտավոր է վերացնել դպրոցում:

Հաճախ երեխաները գռեհիկ բառեր են օգտագործում: Երբ ծնողներին իրազեկում են այդ մասին, բոլորն անխտիր բացառում են նման բառերի օգտագործումն իրենց ընտանիքներում: Մեղքը բարդում են փողոցի, հասարակության վրա:

3. Երեխան կրթվում, դաստիարակվում է հասարակության մեջ:

Հասարակությունը ես եմ, դու ես, մենք ենք: Ընտանիքն այդ հասարակության բջիջն է: Ինչի՞ց է, որ երեխան այն բառերը, որոնք փողոցում է գործածում, ընտանիքում չի արտաբերում, այն արարքները, որ դրսում թույլ է տալիս, ընտանիքում չի կարող թույլ տալ: Արդյո՞ք հասարակության յուրաքանչյուր անդամի անտարբերությունից չէ: Ասում են, չէ՞, անտարբերությունը ծնում է չարիք:

Ինչու՞ հասարակության յուրաքանչյուր անդամ իր ընտանիքում խստապահանջ է իր երեխաների հանդեպ, իսկ փողոցում իր շուրջը կատարվող անթույլատրելի արարքների կողքով շատ հանգիստ անցնում է: Հենց սա է անտարբերությունը, որ պիտի արմատախիլ անի հասարակություն կազմող անհատներ:

ից յուրաքանչյուրն իր մեջ: Եթե հասարակության յուրաքանչյուր անդամ բակը, փողոցը, ծառուղին, պուրակը ընդունի որպես իր սեփականություն, պահի, պահպանի, դրանք փչացնող, կեղտոտող ձեռքը բռնի, ոչ պատշաճ խոսքեր արտասանողին նկատողություն անի, ապա նման հասարակության մեջ կաճեն, կմեծանան հիանալի անհատներ՝ մեր երեխաները, և վաղը կունենանք հիանալի հասարակություն:

Ամեն ինչից առաջ և ամեն ինչից հետո սրտացավ վերաբերմունք է պետք մեր երեխաների հանդեպ: Իսկ սրտացավ վերաբերմունք ասելով՝ պետք է նկատի ունենալ ոչ թողտվությունը, այլ բարձր արժեքներով կրթելը, վատ օրինակից հեռու պահելը:

Ինչքան ամուր լինի դպրոց-ընտանիք-հասարակություն կապը, այնքան շատ կունենանք այդ նույն հասարակության, ընտանիքի, դպրոցի պատիվը բարձր պահող նվիրյալներ, իրենց պապերից, հայրերից ավանդ ստացած ազատ ու անկախ հայրենիքը շենացնողներ:

Լյուսինա Բեգևորյան  
Ստեփ. Ե. Չարենցի անվան  
հ. 7 հիմն. դպրոցի դասվար

Շնորհավորանք

ԱՄԲՈՂՉ ՀՈԳՈՎ



Նոյեմբերի 7-ը կնշանավորվի Ձեր կյանքում որպես վեց տասնյակ տարիներ բոլորած շրայլ ոգու տեր մարդու անցած ճանապարհ:

Ձեր իսկ մանկավարժական երկարատև գործունեության շնորհիվ շրջապատում ձեռք եք բերել հեղինակություն, իսկ տարիների՝ տնօրենի պարտավորությունները մշտապես ուղեկցվել են ամենամյա հաջողություններով, որ հատուկ է եղել մեր դպրոցին: Ակնհայտ է, որ Ձեր տքնաջան աշխատանքն ու նվիրյալ ջանքերն ապարդյուն չեն անցել, և երբեք չի մոռացվի Ձեր անձնական մասնակցությունը դպրոցի վերաշինման գործում դեռևս հետպատերազմյան տարիներին:

Արդեն 20 տարի է՝ Ձեր խոսքով է սկսվում դպրոցի ուսումնական տարվա մեկնարկը: Հետևողական աշխատանքի և անմնացորդ նվիրումի շնորհիվ ամեն տարի մի նոր սերունդ է կյանք մտնում՝ տանելով իր հետ Ձեր մարդանքներն ու պատգամները: Ցանկացած աշխատանք գնահատականի, ուշադրության կարիք ունի, և այդ առումով

շնորհավորում ենք նաև վերջերս արցախանապատ գործունեության համար ԼՂՀ «Մայրություն» հասարակական կազմակերպության կողմից «Մայրական երախտագիտություն» մեդալով պարգևատրվելու համար, որը նվիրական ու խիզախուններով լի աշխատանքի արգասիք է:

Շնորհավորում ենք Ձեր 60-ամյա հոբելյանը և մաղթում Ձեզ բեղմնավոր ու արդյունավետ աշխատանք, նորանոր ձեռքբերումներ և հաջողություն բոլոր նախաձեռնություններում: Ձեր հոգու թաքուն անկյուններից թող դուրս գան և թևածեն ամուր սեղմած բոլոր երազանքները: Այս հոբելյանի կապակցությամբ բազմաթիվ հրաշքներով լի աստեղային ժամեր ենք ցանկանում Ձեզ: Շարունակիր սիրով ու ջերմությամբ լցնել մեր սրտերը՝ ապահով կրթական օրրան դարձնելով մեր դպրոցը: Ցանկանում ենք, որ բոլորս էլ Ձեզ հետ աշխատենք մեր երազանքների՝ վերանորոգված նոր դպրոցում՝ նոր եռանդով, հաջողության սպասելիքներով: Մաղթում ենք Ձեզ երկար տարիների կյանք, մեծ երջանկություն, երազանքների իրականացում:

Մարտակերտի Վ. Բալայանի  
անվան միջնակարգ դպրոցի  
մանկավարժական կոլեկտիվ

Շնորհավորանք

ԱՆՄՆԱՅՈՐԳ ՆՎԻՐՈՒՄՈՎ



Շուրջ 21 տարի է, ինչ համայնքում ազնվության ու բարության հունդեր է սերմանում Հաղորդի Ս.Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցում:

Իր կյանքի իմաստը փորձառու դասվարը գտնում է սաներին ուկեղենիկ մայրենիին ծանոթացնելու, ինքնուրույն մտածողությամբ և անսպառ գիտելիքներով զինելու մեջ:

Դասվար Է.Աբրահամյանն ունի դասավանդման իր ուրույն մեթոդներն ու հնարները, որոնց շնորհիվ նրա աշակերտները աչքի են ընկնում ոչ միայն գիտելիքներով, այլ նաև կյանքի ճանաչողությամբ ու նպատակասլաց մտածողությամբ: Նա կարողանում է մանկանակ երեխաների հետ, գտնել նրանց հոգու բանալին, բացահայտել այդ մաքուր ու անաղարտ հոգիների խորհրդավոր աշխարհը: Այս հատկանիշներով էլ նա միշտ վաստակել ու շարունակում է վաստակել թե՛ ծնողների, թե՛ աշակերտների և թե՛ գործընկերների սերն ու համակրանքը:

Էլա Աբրահամյանը ծնվել է 1954 թ. հոկտեմբերի 28-ին Բաքու քաղաքում: 1972-73

ուստարում ընդունվել է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտը, ապա տեղափոխվել Ստեփանակերտ: 1977-78թթ. աշխատել է Բյուրթանի միջնակարգ, իսկ 1979-1983թթ.՝ Վարդաշատի տարրական դպրոցում՝ որպես դասվար և վարիչ: 1983-93թթ. Հաղորդ քաղաքի մանկապարտեզում աշխատել է որպես դաստիարակ-մեթոդիստ: 1993 թվականից մինչև օրս էլա Աբրահամյանն աշխատում է Հաղորդի Ս.Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար: Որտեղ էլ աշխատել է ուսուցչուհին, միշտ աչքի է ընկել իր ստեղծագործական նախաձեռնությամբ, տպավորիչ ու հուզական խոսքով, մանկավարժին հատուկ հոգեբանությամբ ու կեցվածքով: Նա նաև սիրող ու հոգատար մայր է, քնքուշ տատիկ և պարզապես անգնահատելի մարդ:

Այսօր մեր գործընկերուհին 60 տարեկան է: Կուլեկտիվը ջերմորեն շնորհավորում է հոբելյարին, ցանկանում քաջառողջություն, ուժ ու կորով, նորանոր նվաճումներ աշխատանքային հետագա տարիների ընթացքում:

Թող նման մանկավարժները, ինչպիսին էլա Աբրահամյանն է, միշտ ջերմություն ու հոգատարություն սփռեն իրենց շուրջը, թող միշտ բարությունն ու խաղաղությունը թևածեն բոլոր կրթօջախներում:

Հաղորդի Ս.Մանվելյանի անվան  
միջն. դպրոցի մանկավարժական  
կոլեկտիվ





ՌԻՍՈՒՑՉԻ ՎԱՐՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

21 հոկտեմբեր 2014

N 203 Մ

ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱՎԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի 139-Մ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ «ՌԻՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՎԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶՎԱԾՆԻՇՆԵՐԻ ԶԵՎԱԹՈՒՂԹԵՐ ԵՎ ՀԱՐՅԱԹԵՐԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաքաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածով, Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 10-ի N 225-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 4-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի ապրիլի 4-ի՝ «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի վարչատնտեսական մակարդակի մասին տրվող տեղեկանքը հաստատելու մասին» N 139/Մ հրամանով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 1-ի:

2. Հաստատել «Ուսուցչի մասնագիտական գործունեության ընդհանրական գնահատման չափանիշների ձևաթուղթը և հարցաթերթերը» համաձայն Հավելված 2-ի:

3. ԼԳՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնի՝ սույն հրամանը ներկայացնել ԼԳՀ շրջանների վարչակազմերի աշխատակազմերի կրթության բաժնի վարիչներին և հրապարակել «Լուսարար» թերթում:

Ս. ԱՍԻՅԱՆ

Հավելված 1  
Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2014թ. հոկտեմբերի 21-ի N203/Մ հրամանի Հավելված Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի օգոստոսի 2-ի N 139-Մ հրամանի

ՏԵՂԵԿԱԼՔ  
ՀԱՆՐԱՎԱՐԹՎԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՌԻՍՈՒՑՉԻ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԳՎԻ ՄԱՍԻՆ

- 1. Ուսուցչի անունը, ազգանունը, հայրանունը-----
2. Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը-----
3. Տեղեկություններ կրթության վերաբերյալ (ինչ ուսումնական հաստատություն է ավարտել, մասնագիտությունը, որակավորումը, լրացնել, ինչպես լրացված է դիպլոմում)-----
4. Ուսումնական հաստատության անվանումը, որտեղ աշխատում է տվյալ պահին-----
5. Դասավանդած առարկան-----
6. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման որ աստիճանի տարակարգ ստանալու համար են ներկայացվում փաստաթղթերը-----
7. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգ ստանալու համար ներկայացվող բնութագրիչները (նշել առանձին-առանձին)
1)-----
2)-----
3)-----
4)-----
5)-----
6)-----
7)-----

Տնօրենի ստորագրություն  
Կ.Տ.

Հավելված 2  
Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2014թ. հոկտեմբերի 21-ի N203/Մ հրամանի

Table with 4 columns: Գործունեության ընդհանրական չափանիշները, Կատարողների մակարդակը (գերազանց 5 միավոր, լավ 4 միավոր, բավարար 3 միավոր, անբավարար 2 միավոր), 1-4 rows of criteria.

Table with 5 columns: 5-9 rows of criteria, 40-45 միավորը՝ գերազանց, 31-39 ը՝ լավ, 23-30 ը՝ բավարար, մինչև 22 ը՝ անբավարար

Տնօրենի ստորագրություն  
Կ.Տ.

Table with 5 columns: Բնութագրիչներ, 0 համաձայն չեն, 1 մասամբ համաձայն են, 2 հիմն. համաձայն են, 3 լիովին համաձայն են. 12 rows of criteria.

Տնօրենի ստորագրություն  
Կ.Տ.

\*Գնահատմանը մասնակցում են գործընկերների առնվազն 50 տոկոսը:

**ՈՒՍՈՒՑՉԻ ՎԱՐՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**Սովորողի հարցաթուղթ (Ձև 3)**

*Միջնակի տարիքի, խնդրում ենք արտահայտել Ձեր կարծիքը ուսուցչի մասին*  
 Դասավանդող ուսուցչի ազգանունը, անունը, հայրանունը  
 Դասավանդած առարկան  
 Ուշադիր կարդացեք յուրաքանչյուր դասողություն և նշում կատարեք այն սյունակում, որն առավել ճշտությամբ է արտահայտում Ձեր կարծիքը:

Բնութագրիչներ	0 համա- ձայն չեմ	1 մասամբ համա- ձայն եմ	2 Ֆիմնա- կանում համա- ձայն եմ	3 լիովին համա- ձայն եմ
1. Նա արագ ու մատչելի է բացատրում նոր դասը				
2. Նա բարի է և ներողամիտ				
3. Ես հարգում եմ նրան և համարում օրինակելի մարդ				
4. Նրա դասերին ակտիվորեն մասնակցում է զրեքե ամբողջ դասարանը				
5. Նրա դասերն այնքան հետաքրքիր են անցնում, որ չեմ զգում ժամանակը				
6. Չնահանդիս եմ անաչառ է և արդարամիտ				
7. Նա չի վիրավորում և չի կոպտում մեզ				
8. Ես վստահում եմ նրան և կարող եմ ինձ հուզող հարցերը քննարկել նրա հետ				
9. Երբ նա լրացուցիչ ուսուցանական հանձնարարություն է տալիս, ես սիրով կատարում եմ				
10. Նա կարողանում է կատարել դասարանը				
11. Նրա դասավանդած առարկան հիմնականում յուրացնում ենք դասարանում				
12. Նա լսում է մեր կարծիքը				
13. Ես նրա դասին ինձ լավ եմ զգում, չեմ լարվում, չեմ անհանգստանում				
14. Եթե ինչ-որ հարցում համաձայն չլինեմ նրա հետ, հանգիստ կարող եմ ասել այդ մասին				
15. Նա հաճախ է խրախուսում մեր նախաձեռնությունները և մտահղացումները				

38-45 միավոր՝ զեղաբան, 25-37-ը՝ լավ, 12-24-ը՝ բավարար, 0-11-ը՝ անբավարար

Տնօրենի ստորագրություն  
Կ.Տ.

\*Չնահանդանը մասնակցում են սովորողների առնվազն 50 տոկոսը:

**Ճնդողի հարցաթուղթ (Ձև 4)**

*Չարժեքի ծնող, խնդրում ենք արտահայտել Ձեր կարծիքը ուսուցչի մասին*  
 Դասավանդող ուսուցչի ազգանունը, անունը, հայրանունը  
 Դասավանդած առարկան  
 Ուշադիր կարդացեք յուրաքանչյուր դասողություն և նշում կատարեք այն սյունակում, որն առավել ճշտությամբ է արտահայտում Ձեր կարծիքը:

Բնութագրիչներ	0 համաձայն չեմ	1 մասամբ համաձայն եմ	2 հիմնա- կանում համաձայն եմ	3 լիովին համաձայն եմ
1. Երեխաս հաճույքով է մասնակցում նրա դասերին				
2. Երեխաս նրա հանձնարարած տնային աշխատանքները հիմնականում ինքնուրույն է կատարում				
3. Երեխաս հետաքրքրված է նրա առարկայով				
4. Նա բարի է և ներողամիտ				
5. Երեխաս հարգանքով է խոսում նրա մասին				
6. Իմ երեխայի կրթության և դաստիարակության հարցում պատրաստ եմ խորհրդակցել նրա հետ				
7. Նա բարեկիրք է և բանիմաց				
8. Նա կարողանում է ծնողներին ոգևորել՝ իրենց երեխաների ձեռքբերումներն ու արժանիքները մատնանշելով				
9. Նա կարողանում է բացահայտել երեխաների ընդունակությունները և զարգացնել նրանց կարողություններն ու հմտությունները				
11. Սովորողներին զնահանդիս եմ անաչառ է և արդարամիտ				
12. Ես վստահ եմ, որ նրա առարկայից երեխաս կարյուն գիտելիքներ է ստանում				

30-36 միավոր՝ զեղաբան, 20-29-ը՝ լավ, 10-19-ը՝ բավարար, 0-9-ը՝ անբավարար

Տնօրենի ստորագրություն  
Կ.Տ.

\*Չնահանդանը մասնակցում են ծնողների առնվազն 50 տոկոսը:

**Ուսուցչի ինքնաբերական հարցաթուղթ (Ձև 5)**

*Հարձակուսուցիչ, խնդրում ենք արտահայտել Ձեր անձին և մասնա խումբի անդամներին վերաբերող ինտելեկտուալ հարցաթուղթում ներկայացված հարցերին*  
*Ձեր կարծիքը հարցաթուղթի յուրաքանչյուր հարցի վրա կատարելով զեղաբան, 25-37-ը՝ լավ, 12-24-ը՝ բավարար, 0-11-ը՝ անբավարար*


Ձեր ազգանունը, անունը, հայրանունը  
 Դասավանդած առարկան

Բնութագրիչներ	0- Դանձաձայն չեմ	1- Մասամբ համաձայն եմ	2- Ֆիմնականում համաձայն եմ	3- Լիովին համաձայն եմ
1. Ես նշտապես բարձրացնում եմ իմ գիտելիքները				
2. Ես սիրապետում եմ մանկավարժական նոր մեթոդներին				
3. Ես հաշվի եմ առնում սովորողների անհատական առանձնահատկությունները				
4. Ես լավ եմ սիրապետում իմ առարկային				
5. Ես հաշվի եմ առնում գործընկերների խորհուրդները				
6. Գործընկերներս հաշվի եմ առնում իմ խորհուրդները				
7. Ես պատրաստակամությամբ օգնում եմ նրանց, ովքեր դրա կարիքն ունեն				
8. Ես կարողանում եմ բացահայտել սովորողների ընդունակությունները, զարգացնել նրանց կարողություններն ու հմտությունները				
9. Ես հանդանանրին նախապատրաստվում, պլանավորում եմ իմ աշխատանքը				
10. Ես հաճախ եմ հանդես գալիս հետաքրքիր նախաձեռնություններով				
11. Ես վստահ եմ սովորողների և ծնողների հարցանքը				
12. Սովորողները Ձեզ վստահում են և իրենց հուզող հարցերը քննարկում են Ձեզ հետ				
13. Սովորողների նկատմամբ Ձեր մասնագիտական մոտեցումները ինձիւմ են նրանց անհատականության և կարողությունների մանաքննան վրա				
14. Գուց խրախուսում եք սովորողների ինքնուրույն նախաձեռնություններն ու մտահղացումները				
15. Գուց կարողանում եք Ձեր անցկացրած դասերի ընթացքն ու արդյունքները բազմակողմանորեն վերլուծել և համալրել զնահանդան				

38-45 միավոր՝ զեղաբան, 25-37-ը՝ լավ, 12-24-ը՝ բավարար, 0-11-ը՝ անբավարար

ՀԱՅԿԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2013-2014 ՌԻՍԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՏՓՈՓՈՒՄԸ ԵՎ 2014-2015 ՌԻՍ ՏԱՐԻՄ ՌԻՄԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՋՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ



Կրթության նախարար...

Կրթության նախարար... Պատմությունն ու ժամանակը փաստել են, որ բարգավաճումն է այն պետությունը, որտեղ կրթության ոլորտը պատշաճ մակարդակի վրա է: Եթե ուզում ենք ունենալ բարգավաճ, հզոր պետություն, բարեպաշտ ու կրթված սերունդ, ապա պետք է կարողանանք աշակերտներին դաստիարակել որպես բանիմաց, պետության հանդեպ պատասխանատու քաղաքացիների. դա այսօրվա հրամայականն է և բոլորիս պարտքը վաղվա օրվա հանդեպ:

Գնահատման հարցում, ինքնակրթությամբ չի զբաղվում, չի կատարելագործվում, միանգամայն պարզ է դառնում, որ նմանատիպ ուսուցչի և սովորողի միջև չեն կարող կայանալ այնպիսի հարաբերություններ, որոնք կնպաստեն սովորողի առաջադիմությանը: Սովորեցնողը պարտավոր է հասկանալ, որ աշակերտը ոչ այնքան գիտելիքի և տեղեկության կարիք ունի, որքան մտածողության, տեղեկությունների մշակման և սոցիալական հմտությունների, ինչն անհրաժեշտ է կրթություն ստանալուց հետո կողմնորոշվելու արագ փոփոխվող աշխարհում:

Պետք է խոստովանել, որ դպրոցներում կտրուկ իջել է առաջադիմության սանդղակը: Գերազանց և լավ գնահատվող շատ աշակերտներ իրենց «վաստակած» նիշերով չեն համապատասխանում չափորոշային պահանջներին: Թերությունները բազում են, իսկ պատճառը մեկն է, տնօրենի/տնօրենների/պատասխանատուության պակասը, ինչպես նաև համապատասխան կարողությունների բացակայությունը: Ուսուցիչները և տնօրենները իրենց աշխատանքով մշտապես գնահատվում են և՛ աշակերտների, և՛ ծնողների կողմից: Այս իմաստով մեծ դեր են խաղում ծնողների կողմից ներկայացված դիմում-բողոքները, որոնց պարտավոր էր արձագանքել դպրոցի տնօրենը/տնօրենները/:

Դասագրքերում արձանագրված պատմական փաստերը դեռ բավարար չեն, ուսուցչը պետք է շունչ ու ոգի հաղորդի դրանց՝ կազմակերպելով բազմաբնույթ միջոցառումներ, այն դարձնելով ավելի տեսանելի ու գործնական:

Այս ամենի համար որպես սկիզբ պետք է սկսել տարրական դպրոցից: Տարրական դպրոցը յուրաքանչյուր հասարակության մեջ կարևոր դեր է կատարում: Բարեփոխել տարրական դպրոցը՝ մշակակում է հնի դրական հիմքերի վրա ներառել արտասահմանյան դպրոցի լավագույն փորձը:

Տակել Գաղբաբյանի միջնակարգ դպրոցից 5 աշակերտներ, որոնցից 4-ը վաստակավոր ուսուցչուհի Լյուբա Մայիլյանի, 1-ը երիտասարդ ուսուցչուհի Արմինե Աբրահամյանի, 1-ը Մեծ Թաղերից Ռուզաննա Ավետիսյանի, 1-ը Մարիամածորից Ավետլանա Գրիգորյանի սաներն են:





ՄՇԱԿՈՒՅՑ

ԵՐԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՄԱՆՆԵՐ ԶԻ ՃԱՆԱԳՈՒՄ. ՄՈՆԻՏՐԻՆԳ ԿԱԲԱԼԻՆ ԱՐՃԱՆՈՒՄ

Հոկտեմբերի երկրորդ տասնօրյակն Արցախում նշանավորվեց մշակութային երկու խոշոր իրադարձությամբ՝ աշխարհահռչակ օպերային երգչուհի Մոնսերատ Կաբալիեի այցով և հայ անվանի կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի հոբելյանական համերգով:

Մոնսերատ Կաբալիեի անունը արցախցի-ներին առանձնապես սիրելի դարձավ անցյալ տարվանից, ավելի կոնկրետ՝ հունիսից, երբ նա այցելեց Արցախ աշխարհ: Առանց պայմանականությունների, որպես բարի կամքի դեսպան ընդունել է հրավերը և եկել մեր երկիրը՝ Հայաստան-Արցախ՝ տեսնելու նրա քրիստոնեական արժեքները, եղել յոթ եկեղեցիներում, այդ թվում՝ նշանավոր Գանձասարում: Արդյունքում ստեղծվեց «Հայաստան և Արցախ. քրիստոնեության կրթական» ալբոմը, որում ներկայացված են երգչուհու երգերի վրա համարված յոթ հայկական եկեղեցիների ու վանքերի պատմությունը: Ալբոմի շնորհանդեսը կայացավ Փարիզում 2013 թ. դեկտեմբերին: Եվ հենց շնորհանդեսի ժամանակ էլ երգչուհին, ի պատասխան ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանի հրավերի, խոստացավ, որ նորից կայցելի Արցախ՝ այս անգամ համերգով հանդես գալու համար: Իր նամակում ԼՂՀ Նախագահին նա մասնավորապես գրել էր, թե Արցախը որքան մեծ տպավորություն է թողել իր վրա. և ժողովրդի ընդունելությունը, և եկեղեցիները, ինչի շնորհիվ նրա մոտ ցանկություն առաջացավ նորից գալ և միասին տանել զինադադարի 20-ամյակը: Եվ հենց իր նամակի տողերն էլ ընտրվել են համերգի խորագիր՝ «Հանուն խաղաղության և Արցախի բարգավաճման»:



ԼՂՀ ղեկավարը նշել է, որ Մոնսերատ Կաբալիեի այցը իր ուրույն տեղն է զբաղեցնում Արցախի կյանքում և շոշափելի ներդրում ունի մեր մշակույթի զարգացման գործում:

Իսրայելյանի հետ համատեղ, ով ամբողջ ծրագրի համակարգողն է: Իսկ ծրագիրը հնարավոր դարձավ իրականացնել գլխավոր հովանավոր «Convers Bank» և «Աֆիան Պալադա» ընկերությունների շնորհիվ:

Համերգից առաջ կազմակերպիչները հրավիրեցին մամուլ ասուլիս: Նախարար Նահրեհ Աղաբալյանը, ներկայացնելով Մոնսերատ Կաբալիեի արցախյան այցի պատմությունը, ասաց, որ դրանով երգչուհին՝ որպես մեծություն, հաստատեց, որ իր համար չեն կարող ուղեկցել լինել որևէ մեկի, առավել ևս Ադրբեյջանի քաղաքական նկրտումները, և նա բարձր է կանգնած այդ ամենից և ազատ է իր ցանկությամբ, իր կամքով այցելելու, ճանաչելու, բարեկամներ ընտրելու հարցում: Իսկապես, մեծ բարեկամության և համագործակցության սկիզբ է դրվել: Մեծանուն երգչուհու օգնությամբ, նշեց նախարարը, մասնագետներ կիրավորվեն Արցախ՝ վարպետության դասեր անցկացնելու համար, քանի որ նպատակ ունեն Արցախում զարգացնելու օպերային արվեստը:

Նախագծի համակարգող Գարիկ Իսրայելյանի հավաստմամբ՝ Մոնսերատ Կաբալիեի այս ծրագիրը պատահական չէր: Դեռ 2001 թվականին նա խոստացել էր այցելել Հայաստան՝ Զեռնի Պապի հետ, բայց ինչ-ինչ պատճառներով չէր ստացվել ճանապարհորդությունը: Հետագայում, երբ առիթ ստեղծվեց, նա մեծ ուրախությամբ արձագանքեց, որ, այո, ինքը քրիստոնյա է և երազում է լինել այն երկրում, որն առաջինն է ընդունել քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն: Բացի դրանից, տեղեկացնում է Գ. Իսրայելյանը, երգչուհին բազմաթիվ կապեր է ունեցել հայկական Միլիտերի հետ, լավ ծանոթ է հայկական երաժշտությանը: Այսինքն Մոնսերատ Կաբալիեի՝ Հայաստան գալու մի քանի հիմքեր կային: Ծրագրի մեջ շատ մարդիկ մասնակցեցին, խոստովանում է նախագ-

ծի համակարգողը: Շատ կարևոր էր բարերար Էդուարդո Էռնեստյանի աջակցությունը, առանց որի երկրորդ այցը հնարավոր չէր լինի իրականացնել:

Մոնսերատ Կաբալիեի ուժեղ կամքի տեր կին է, իր սկզբունքներին հավատարիմ՝ իր տպավորությունները փոխանցեց Գարիկ Իսրայելյանը: Նա համարում է, որ երաժշտությունը սահմաններ չի ճանաչում, ցանկացած երաժիշտ կարող է հանդես գալ, որտեղ էլ որ լինի, ինչն էլ ապացուցեց իր երկրորդ այցով Արցախ:

Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում Մոնսերատ Կաբալիեի, նրա դուստր Մոնսերատ Մարտի, տեմո Ջորդի Գալանի և դաշնակահար Ռիկարդո Էստրադայի մասնակցությամբ համերգը հիասթափեց էր: Փույթ չէ, որ անողոր ժամանակ չի խնայել օպերային առաջին տարանոյի ծայրային տվյալները, դասական երաժշտության սիրահարները վայելում էին հռչակավոր երգչուհու ներկայությունը, վարպետությունն ու նվիրումով կատարումները ու սրտատրոփ սպասում նրա ամեն մի ելույթին:

Համերգի ծրագրում հնչում էին արևմտաեվրոպական հայտնի կոմպոզիտորների սիրված օպերաներից՝ արիաներ, դուետներ, խտակական և իսպանական երգեր: Հանդիսատեսները «բավով»-ներով էին ծափահարում յուրաքանչյուր կատարում: Ծրագրի վերջում երգիչները բոլորը միասին կատարեցին Կոմիտասի հանրահայտ «Կռունկը», որը մեծ խանդավառությամբ ընդունվեց հանդիսատեսի կողմից:

Համերգին ներկա էին ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, վարչապետ Արա Հարությունյանը, պաշտոնատար այլ անձինք, հյուրեր Հայաստանից և արտերկրից:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԸ՝ ՊՈՒՆԻՄԱՅԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

Հոկտեմբերի 19-23-ը Արցախում անցկացվեց Պոնեգիայի միջազգային փառատոն՝ թվով երկրորդը: Նախորդը տեղի էր ունեցել 2012-ին, որին մասնակցել են շուրջ երկու տասնյակ երկրներից ժամանած բանաստեղծներ: Այս անգամ ևս աշխարհագրությունն ընդարձակ էր՝ Իտալիա, Բուլղարիա, Սերբիա, Լեհաստան, Գերմանիա, Լիբանան, Ռումինիա, Ռուսաստան, Հայաստան... Նկատենք՝ Պոնեգիայի միջազգային փառատոն տարածաշրջանում առաջին անգամ հենց Արցախում է կազմակերպվել, և ԼՂՀ-ում հերթական անգամ բանաստեղծության տոն կազմակերպվել հիմք է տալիս ասելու, որ այն արդեն ավանդույթ է դառնում:

Բացման հանդիպման արարողությանը, որը տեղի ունեցավ Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում, փառատոնի կազմկոմիտեի նախագահ, ԼՂՀ գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանը մասնավորապես նշեց, որ Արցախը յուրահատուկ երկիր է թե՛ իր չնաշխարհիկ բնությամբ, թե՛ մշակութային բազմադարյա ավանդույթներով և թե՛ արցախցիների ազնիվ լավատեսությամբ: Դարաբաղում բանաստեղծության նկատմամբ հատուկ վերաբերմունք կա, որի առիթավառյան այսօրինակ միջոցառումներն են: «Մենք բանաստեղծությունը պարզել ենք մեր լեռների վրա՝ որպես խաղաղության, սիրո և հավատի խորհրդանիշ: Մեր բոլոր գրողներին, ովքեր ներկայացել են փառատոնին, մենք համարում ենք խաղաղության դեսպաններ և շնորհակալ ենք բոլոր նրանց, ովքեր նախորդ փառատոնից մինչև այս փառատոնն ընկած ժամանակահատվածում գրքեր են տպագրել Արցախի ու Հայաստանի մասին, որոնք ճանաչել են մեր հիմնախնդիրը, կանգնել են Արցախի կողքին, մենք մեր խոնարհումն ենք բերում նրանց»,-ասաց Վ. Հակոբյանը:

Փառատոնի մասնակիցներին ողջունեց ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը: Այս տարին հոբելյանական է Արցախի համար. լրացել է զինադադարի հաստատման 20-րդ տա-

րեդարձը: Արցախում բոլոր մշակութային միջոցառումներն անցել են հենց այդ խորագրի ներքո՝ «Խաղաղություն՝ Արցախին»: Բացառություն չէ նաև այս փառատոնը: Մենք բարի գալուստ ենք ատու բոլորին, ովքեր Արցախ են գալիս բարի կամքով, և մեզ համար կարևոր է յուրաքանչյուրի կարծիքը, նշեց նախարարը:

ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար Արմեն Սարգսյանն իր ելույթում կարևորեց Պոնեգիայի միջազգային փառատոնի նշանակությունը: «Այս միջոցառման հիմքը ձեր բարի կամքն է, այն լեզվական, մշակութային, գիտական ու կրթական կապերը, որ դարեր շարունակ հայ ժողովուրդն ունեցել է ձեր հայրենիքների հետ: Ասել է թե՛ կապը ձեր հայրենիքների հետ շատ վաղուց է, և Պոնեգիայի միջազգային փառատոնը նոր լիցք կհաղորդի դրան: Պոնեգիան կապող օղակ է բոլոր սրտերի համար՝ անկախ դավանանքից, լեզվից և ճանաչված ու չճանաչված լինելուց,-ասաց Ա. Սարգսյանը:

Նույն օրը Պոնեգիայի արցախյան երկրորդ միջազգային փառատոնի մասնակիցներն այցելեցին Շուշի, եղան տեղի գորգերի թանգարանում: Իսկ կերպարվեստի թանգարանում տեղի ունեցավ գրքերի շնորհանդես, որոնք հրատարակվել են Պոնեգիայի միջազգային առաջին փառատոնից հետո: Փառատոնի մասնակիցներին ու հյուրերին ներկայացվեցին Վարդան Հակոբյանի, Հրանտ Ալեքսանյանի, Ռոբերտ Եսայանի, Կալինա Իզաբելա Ջիլյայի, Ռոման Կիսլովի, Վանյա Անգելովայի, Լյուբիցա Միլետիչի և այլ հեղինակների նորահրատարակ գրքերը:

Փառատոնի երկրորդ օրը բանաստեղծներին ընդունել է ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը: Նախագահը գոհունակությամբ նշել է, որ Պոնեգիայի միջազգային փառատոնի անցկացումն Արցախում կարևոր դերակատարություն ունի մեր երկրի մշակույթի զարգացման և Արցախն արտաքին աշխարհին ճանաչելի դարձնելու գործում:

Փառատոնի անցկացման հաջորդ հասցեն Տիգրանակերտն էր, որտեղ կազմակերպ-

վեց ծառատունկ և ժենյալով հացի տոն: Այսուհետև Տիգրանակերտի ամրոցի հարևանությամբ գտնվող այգում իրենց հատուկ տեղը կունենան բանաստեղծների տնկած ծառերը, որոնցից յուրաքանչյուրը մի երկիր է ներկայացնում՝ ի նշանավորումն միջազգային փառատոնի: Միջոցառումն ավարտվեց պոնեգիայի ժամով. կրկին հնչեց բազմալեզու բանաստեղծությունը՝ մարդկային սրտերը լցնելով բարության լույսերով:

Երրորդ օրը Պոնեգիայի արցախյան երկրորդ միջազգային փառատոնի մասնակիցներն այցելեցին Վանք գյուղ: Ըստ ծրագրի՝ «Շուշի քաղաքում» տեղի ունեցավ արաբական պոնեգիայի ժամ: «Իմ հայացքը Արցախի նկատմամբ հիացմունքի ու ամբողջական վերացումի հայացք է, և ես գեղարվեստորեն խոր ցնցում ապրեցի: Այս փառատոնն ավելացնելու է այն, ինչ որ Արցախն ավելացրեց իբրև գեղեցկություն, որովհետև ես Արցախի բնության մեջ գտնված նոր գույներ հայտնաբերեցի: Այս փառատոնի ընթացքում հայտնագործեցի նոր մարդկանց, որոնք միշտ մնալու են իմ հիշողության մեջ»,- ասաց արաբ բանաստեղծ Աբիսա Դիմաշկին:

Լիբանանահայ բանաստեղծ, թարգմանիչ Սարգիս Կիրակոսյանն իր խոսքում հետևյալ շեշտադրումներն արեց. «Այս փառատոնը՝ իբրև շարունակությունը առաջին փառատոնի, հայ բանաստեղծության միջազգայնացման նախաձեռնության ուսել շրջայի երկրորդ օղակն է: Այն ես դիտում եմ իր երկու երեսներով՝ և՛ գեղարվեստական, և՛ քաղաքական, որովհետև հավատում եմ, որ յուրաքանչյուր գրող, որ եկել է այլ երկրից, երբ վերադառնա իր հայրենիքը, անպայման իր հետ տանելու է ոչ միայն արցախյան հուշեր, այլև իրենց ժողովուրդներին ներկայացնելու է մեր մարտնչող, ազատատենչ, նորանկախ Արցախի Հանրապետության լինելության, կայանալու համարողային իրավունքը՝ հայկական իրավունք լինելուց առաջ»: Արաբական պոնեգիան արաբական երաժշտության հնչյունների ներքո ներկայացրին լիբանանցի բանաստեղծներ Աբրո Լաբաբին, Աբիսա Դիմաշկին, Սար-

գիս Կիրակոսյանը:

Նույն օրը Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» պետական տարածաշրջանում համալսարանում տեղի ունեցավ սիմպոզիում՝ «Բանաստեղծությունը և տիեզերական շարժումը» թեմայով: Ձեկուցումներով հանդես եկան փառատոնի մասնակիցներ Արմեն Ավանեսյանը (Հայաստան), Մարիուս Քելարուն (Ռումինիա), Աբրո Լաբաբին (Լիբանան), Աննա Սանտոլիբոլիոն (Իտալիա), Արշակ Տեր-Մարգարյանը (Ռուսաստան), Վիլիելմ Բարչո (Գերմանիա), Դարիուս Թոմաս Լեբիոդան (Լեհաստան), Սոկրատ Խանյանը (Արցախ) և ուրիշներ:

Դարիուս Թոմաս Լեբիոդան Լեհաստան այցելության և եվրոպական մշակույթի զարգացման գործում ունեցած ներդրման համար մրցանակներ ու հուշամեդալներ հանձնեց բանաստեղծներ Վարդան Հակոբյանին և Հրանտ Ալեքսանյանին:

Իտալացի բանաստեղծուհի Աննա Սանտոլիբոլիոնը, գրականության զարգացման գործում ունեցած ավանդի համար, խորհրդանշական նվեր հանձնեց Արցախի զՄ նախագահին: Իսկ լեհ բանաստեղծուհի Կալինա Իզաբելա Ջիլյայն Կանանց միջազգային ասոցիացիայի կողմից դիպլոմ և մրցանակ հանձնեց երիտասարդ բանաստեղծուհի Սոնա Համբարձումյանին:

Բանաստեղծ Էդուարդ Սաֆարյանը պարգևատրվեց ԼՂՀ վարչապետի հուշամեդալով, որը նրան հանձնեց Արցախի գրական կազմակերպության ղեկավարը:

Ամփոփելով փառատոնի աշխատանքները՝ կազմկոմիտեի նախագահ Վարդան Հակոբյանը մի խումբ մասնակիցների դափնեկրի դիպլոմներ և դրամական պարգևներ հանձնեց՝ համոզումներ հայտնելով, որ արցախյան հողում նորահայտ հանդիպումներ կլինեն, քանզի Ստեփանակերտն արդեն դարձել է յուրօրինակ պոնեգիայի մայրաքաղաք, որի դռները միշտ բաց են խաղաղության ու սիրո դեսպանների առջև

Կ. ԳԱՐՔԻԵԼՅԱՆ



